

1477

232  
2-85

1893

११७०

109

ԱԻԵՏԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ  
Զարչարանաց Վրայ  
ԽՈՐՃՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Քրիստոսի չարչարիլն  
մարմնով վասն ձեր ...  
Ա. Պետ. դ.



Կ. ԳՈԼԻՍ  
ՏՄԱԳՐ. ԽՀԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

232

2-85

1893

2001

200

մշ. 58

ԱԻԵՏԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԱՆ

232

ՔՐԻՍՈՍԻ

2-85

Չարչարանաց Վրայ

ԽՈՐՃՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Քրիստով չարչարիլն  
մարմնով վասն ձեր . . .  
Ա. Պետ. Գ.



Կ. ՊՈԼԻՍ  
ՏՄԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

— 1893 —



ՅԱՆՄՈՒԱՑ ՅԻՇԱՏԱԿ

ԿՈՂԱԿՑԻՆ ԻՄՈՑ

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹԻ

ՈՐ ՀԱՆԳԵԱԻ Ի ՏԵՐ

Ի խան եւ հիմք ամեայ ծաղիկ հասակի

ի 27 Փետրվար 1889

ԿԱՆԳՆԵԼ ԶՈՅԱ ՄԱՀԱՐՁԱՆ

Ա. Խուսին

Մ. Ա. Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

2331

ԿՕ

## Ա Զ Դ

Քրիստոսի չարչարանաց յիշատակութիւնները՝ նախ  
զմարդ Քրիստոսի երախտեաց կը ծանօթացնէ, երկ-  
րորդ՝ նորա սէրը մարդու սրտին մէջ վառ կը պահի. •  
երրորդ՝ մարդու հոգւոյն մննդաբար սիրոյ կերակուր  
կըլլայ, չորրորդ՝ զօրաւոր ու պահպանող դիրք մար-  
դուն կըլլայ՝ սատանայի. աշխարհի եւ մարմնոյ դէմ.  
հիմնգերորդ՝ սպեղանի կըլլայ մարդու հոգւոյն՝ եւ  
կառողջացնէ. երբ հոգին մեղաց վերք առած կըլ-  
լայ, Վերջապէս այս յիշատակութիւնն է, որ քրիս-  
տոնեայ անձը մեղաց դէմ զօրաւոր ու յաղթող կը  
հանդիսացնէ եւ այս ամէն աշխարհային զանազան  
վիշտերուն դէմ, որոնք կարգիլեն զմարդ դէպ ի  
երկիւք տանող հանապարհի լնմացքէն:

Ուրեմն քանի որ քրիստոնէից փրկութիւն Յիսու-  
սի փրկարար չարչարանքներէն կախում ունի, պիսդ  
բունելու է այս անխար յուսոյ աւասանը, որ մեզ  
անվրէպ շաւզով դէպ ի երկննք կը բարձրացնէ, ուր  
Քրիստոս մեզ համար պատրաստած է անանց կեան-  
քը ու փառքը:

Այս գրքոյկովս ուշիմ ընթերցողը իւր առաջ պիտի  
երեւակայէ զՅիսուս. եւ անոր հետ սիրազգաց խօս-  
քերով պիտի խօսի. Խակ Յիսուսի խօսքը՝ լեզուով չէ  
հոս, այլ գործնական է, որ խօսակցութենէն աւելի  
զօրաւոր եւ ազդու տպաւորութիւն պիտի ազդէ ըն-

Թերցողի սրտին։ Եւ այս դիտմամբ գըքոյկս այս ո-  
ճով գրեցի, սրպէս զի ընթերցողն Յիսուսէն գործ-  
նական դասեր սորվի. օրինակ առնելով նորա լուս-  
թիւն, երկայնմտութիւն, համբերութիւն, խոնար-  
հութիւն, ժուժկալութիւն, անյիշաչարութիւն եւն.  
Եւ այս դասերուն մէջ ընթերցողը պիտի ճանաչէ  
իւր ունեցած պակասութիւններն, ու գլուխ պիտի  
խոնարհեցնէ Յիսուսի առաջ իւր գործած յանցանք-  
ներուն ներում ու թողութիւն ինդըրելով։ Եւ ահա  
այս նկատմամբ տասնեւմէկերորդ գլուխներու վեր-  
ջեր՝ մի մի փոքրիկ աղօթքներ գրած եմ, որպէս զի  
Յիսուսասէր ընթերցողը գէթ օրը մէկ գլուխ մտա-  
ւութեամբ կարդալու յօժարութիւն ունենայ Յիսու-  
սի սիրոցն համար։

Նախկին Միաբան Կոռւց Անապատի  
Եւ այժմ սրբոց Յակոբեանց Երուսալէմի  
Մօյ Խասգիւղի  
Ա. Վ. ՑՈՎՑԱՆՆԵՍԵԱՆ

Եաֆա 1892



ԽՈՐՀԻ ԾՖՈՒԹԻՒՆՔ

## ԻՎԵՐԱՅ ԶԱՐՉԱՐԱՆԱՑ

ՏԵԱՌԻ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔԲԻՍՈՍԻ



ԽՈՐՀԻ ՅԱԿՈՎ ԱՌԱՋԻՆ

Յիսուս ի վերնատունն

Ով Փրկութիւն և կեանք Յիսուս, Քու Փըր-  
կարար մարդեզութեան սկիզբն ու վերջ խաչակ-  
րութիւնք են։ Ամենասուրբ ծննդեանդ օրէն ի  
վեր վշտակիր ուսերէդ խաչ ու չարչարանք միշտ  
անպակաս եղան, մինչեւ մահուգ վերջին շունչը։  
Խաչ եղաւ քեզ այն ցրտաշունչ օրն, երբ թեթե-  
հէմի այրին մէջ ծնար, և խանձարապատ լինելով  
անասնոց մոտերին մէջ դրուեցար։ Խաչ եղաւ քեզ  
այն օրն, երբ Հերովդէսի կոտորիչ սուրէն դէպի  
Եպիպառու կը փախչէիր հալածական։ Խաչ եղան  
քեզ այն երեսունեւերեք ամբողջ տարիներն, յու-  
րըս շարունակ երկրէ երկիր գաղթելով ու տնէ-  
տուն թափառելով վշտակի օրերդ անցուցիր։ Ան-  
պակաս եղան քեզ կրածդ վիշտն ու նեղութիւնը  
քաղցն ու ծարաւը, նախատինքն ու հալածանքը,  
զորս ինքնակամ յօժարութեամբ կրեցիր մարդոց

փրկութեան համար . դու՝ որ երկրիս վրայ եղած գազաններն ու թռչունները իւրեանց որջերու և բայներու մէջ հանգչեցուցիր , բայց երկնի և երկրի ստեղծող Տէրդ գլուխդ գնելու և հանգչելու տեղ մը չունեցար երկրիս վրայ :

Ամենազօ՞ր Տէր , սոյն աւուր փրկագործ զենաման խորհուրդ արդէն յառաջուց սահմաներ էիր , որոյ մէջ ներփակուած էր բալոր մարդկութեան կենաց յօյսն ու ակնկալութիւնը : Այս խորհրդաւոր զոհագործութեան օրինակը նախ քու հաւատարիմ ու սիրելի ծառայ Աբրահամուն յայտնեցիր , երբ նա քու հրամանավ իւր միակ սիրելի որդի Սահակին կռնակը բեռնաւորած զոհագործութեան փայտերով , դէպի զոհարան լեռը կենէր , իւր որդին հան զոհ մատուցանելու համար : Սակայն դու երբ Աբրահամու հաւատարմութիւնն ու Սահակայ հնազանդութիւնը կատարեալ գըտար , բաւ համարեցիր նոցա յօժար կամք փոխանակ գործոյ սիրոյ զոհ ընդունիլ . և մինչդեռ տակաւին Աբրահամ սուրը Սահակի պարանոցին վրայ գնելու և զոհելու կը պատրաստաւէր , դու անմիջապէս ձայն տուիր Աբրահամին , որ Սաբէկայ ծառէն կախուած իսոյն Սահակայ տեղ զենէ . և Սահակի կապերն արձակելով աղատ թողու զայն . Զի այն խորհրդաւոր խոյն քոյ երկնքէն իջնելդ կը նշանակէր . որ հանուր մարդկութեան համար փըրդարար սիրոյ զոհ լինելու սահմանուած էիր :

Խորայէլեան ժողովուրդն Եգիպտոսէն հանածդ

ատեն Մովսէսին հրաման ըրիր , զատկական գառնազենութեան օրէնք սահմանել Աղդին մէջ . և ամէն տարեղարձներուն անխափան կատարել նոյն արարողութիւնը : Եւ ահա նոյն հին արարողութիւնն է , զոր այժմ կը կատարես աշակերտացդ հետ : Ահա Մովսէսական գառը աշակերտացդ հետ կը ճաշակես . և ապա նոր օրէնք կը սահմանես նոր հաւատացեալներուդ համար զի այլ ևս աւելորդ է հին սատուերական ճրագի լոյս վառեալ անստուեր արեգականդ առաջ :

Ո՞հ , քանի՞ ցանկալի է քեզ Տէ՛ր , այս Պատէք , զոր կը ճաշակես սիրելի աշակերտացդ հետ . բայց քանի՞ դառն զզուանք է քեզ մատնիչ Յուդայի ներկայութիւնը , որ անմեղ աշակերտակիցներուն հետ հացդ կ'ուտէ . և զքեզ անօրէն քահանայապետաց ձեռքը մատնելու խաբէական հնարքներ կը մտարերէ :

Ո՞հ , Յուդայի այս նենգամութիւն մեծ խռովութիւն ու սրտայուղութիւն կը պատճառէ քեզ , ո՞վ անյիշաշար Տէր . որ փոխանակ յայտնի յանդիմանութեան՝ մեզմ ու անորոշ կերպով կը յանդիմանես խորամանկ Յուդան հետեւեալ խօսքովդ . « Մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս ի մահ : » Այս խօսքիդ վրայ անպարտ աշակերտներուդ սրտերն ալ հետդ կը վրդովին . ուստի ցաւակյաբար իրար անցումներ կ'ընեն , ու միմեանց ակնարկութիւնն ու հարցումներ կ'ուզզեն . « Ո՞իթէ ե՞ս իցեմ : »

Ի՞նչ է պատճառն , որ անմեղ սրտերն անհան-

գիստ կ'ընես ապերախտ Յուղային համար . և  
ուզգակի չես յայտներ մասնիք ո'վ ըլլալը , ո՞վ  
սրտագէտ Տէր . այլ ամենուն առ հասարակ յան-  
ցապ որտութեան կառկած կը պատճառես : Այս՝  
երկայնամիտ Տէր , այս ամէն ըրածդ՝ Յուղան  
զեղջի բերելուդ և յաւիտենական կորսակնէ ա-  
զատելուդ համար են . որովհետեւ չես ուզեր  
որ նա զրկուի քու ձրիապարգեւ շնորհքներէն , և  
բաժին լինի յաւիտենական կորսական : Սակայն  
նա իւր յամառութեամբ ու անզեղջ քարաօրառու-  
թեամբ ապարդիւն կը հանէ քու ամենակարողու-  
թիւնդ իւր վրայ : Նա այժմ հոգ չունի , որ զքեզ  
մատնելով ինքը զինք պիտի մասնէ անփրկանա-  
ւոր կորսական , այլ միայն այս է նորա հոգածու-  
թիւն , որ ընկերներէն ծածուկ մնայ իւր սրաի  
խորհուրդը , մինչեւ զինքը քահանայապետաց  
ատեանը ձգէ . ուստի չամաշելով ամենագէտ ի-  
մասութենէդ հետեւել հարցումը կ'ուզդէ քեզ .  
«Միթէ ե՞ս իցեմ վարդապետ : » Սակայն դու  
նորա պատրուակ խօսքով զինքը կը յանդիմանես  
առանց ուրիշի մը խմացնելու . « Դու ասացեր » ը-  
սելով : Այս ազգաբարութիւնդ ալ ապարդիւն կը  
մնայ Յուղայի սիրո զեղջի բերելու համար . սա-  
կայն նա առաւել ընտրած է թողուլ դքեզ , և ե-  
րեսուն արծալժը շահիլ հայիափայէն : Բայց դու  
նորէն մատնութեան խնդիր կ'առաջարկես , եւ  
մատնիդ վայ կը կարդաս , և ապա սիրազեզ ձեռ-  
քովդ պատառ պնակի մէջ թրջելով Յուղային կը

կառկառես այլ նա նորէն անզղութեան մէջ կը  
խորասուզի : Այսափ երկայնմասութիւնէդ վերջ  
տակաւին մի սրտառուչ ու գործագութ արա-  
րողութիւն եւս ունիս կատարելու Յուղայի եւ  
այլոց առողջ , ո'վ սիրագթած Յիսուս :

Մովսիսագիր արարողութիւնն աւարտելէդ  
վերջ՝ սպասաւորի կերպարանք կը մտնես . զենցակ  
վրադ կապելով լուացարան ձեռքդ կառնուս . եւ  
ծառայաբար ծնդացդ վրայ չոփելով աշակերտա-  
ցըդ ոտքերուն վրայ ջուր կը լեցնես , և ձեռնե-  
րովդ կը լուսս և կը մաքրես :

Ո՞վ ահաւոր Բարձեալ Տէր քեզ բաւ չե՞ս  
համարիր , որ Աստուածական բարձրութենէդ խո-  
նարհեցար հողեղէն մարդու կերպարանք հագար .  
և այժմ մարդոց անարդ ոտքերո՞ւն ալ կը ծառա-  
յես : Այս՝ Տէր , դու ինչ գործ որ գործես , չափ  
ու սահման չունի . բարձրութիւնդ անչափ խո-  
նարհութիւնդ ա'լ անչափ . ահարկու մեծութիւ-  
նըդ անսահման , ծառայական խոնարհութիւնդ  
ա'լ անսահման , ծածկագէտ խմասութիւնդ ան-  
բաւ , հեղութիւնդ ու երկայնմասութիւնդ ա'լ ան-  
բաւ : Դու ինքդ նախ այս խոնարհութիւն գոր-  
ծով ցոյց կը տաս ծառայաբար . և ապա սիրա-  
բար հրաման կ'ընես աշակերտացդ , որ իրենք ալ  
այս օրէնքով իրարաւ հետ վարուին . և խոնար-  
հութիւն սիրազ ու յարդող եղբայրներ լինին մէկ  
մէկու . և գիւրին լինի նոցա այս գժուարին ա-  
ռաքինութիւն :

Ո՞հ , մատնիչ Յուղայի ոտներուն ալ լուացող կը լինիս , ո՞վ երկայնամիտ Յիսուս . սակայն նա ոչ ահաւոր Տէրութենէդ . կը սարսի , և ոչ ալ սիրագորով խոնարհութենէդ կը պատկառի . այլ երկաթի նման կարծր սիրտ մը կրելով՝ տուածդ ամէն սիրոյ ազգարարութիւններն յետս կը մերժէ : Եւ այսչափ երկայնամութեան ու սիրոյ դէմ խստասիրտ անձի մի համար ի՞նչ ընելիք կը մնայ , ոչ այլ ինչ , բայց միայն վերցնել նորա վըրայէն պահպանող սուրբ Աջոյդ հովանաւորութիւնն , ու մերժեալ զայն Աստուածային ամէն չնորհներէդ :

Այժմ մի նուիրական սիրոյ յիշատակ եւս ունիս աշակերտացդ յանձնելու , սիրագոթա՛ծ Տէր . յիշատակ մի , որուն մէջ դու ինքդ կը պարունակուիս անպարունակելի Աստուածութեամբդ . յիշատակ , որ միշտ քու փրկագործ զոհուիդ յիշեցնել կուտայ ամենակալ Հօրդ առաջ . յիշատակ , որ նորա արդար փրէժինդութեան ամենազօր աջն ի Հայրական պահպանողութիւն կը դարձնէ պատժապարտ մարդոց վրայ : Կերակուր մի , որ սովեալ հոգւոց համար կեանք ու զօրութիւն կուտայ : Դեղ մի , որ մեզօք փիրաւոր ու ապականեալ հոգւոց առողջութիւնն ու սրբութիւնն է : Հաց և գինի ձեռքդ առած կ'օրհնես , ճշմարիտ մարմինդ ու արիւնդ զայն փոխարկելով աշակերտացդ ճաշակել կուտաս , և նոցա կը պատուիրես , որ միշտ կատարեն այս փրկարար խորհըր-

դոյդ սիրոյ յիշատակը , և կատարել աւանդեն իրենց յաջորդաց , որպէս զի այս խորհրդով անբաժան մնաս արիւնագին ժողովրդէդ , մինչեւ աշխարհիս վերջ :

Մատնիչ Յուղային համար չէ այս Աստուածածիր պարգեւդ Փրկիչ , որովհետեւ ինքնին հըրաժարուած է անդամակցութենէդ , և մերժած զքեղ իւր հոգիէն ու սրտէն . և աղահութեան դեւն ընդունած է իւր սրտին մէջ՝ իւր անձին իշխան ու կառավար , ուստի իւր սիրագորով ներկայութիւնդ զզուանք ու տաղտկութիւն է նորա համար : Իսկ քեզ միայն այս խօսք կը մնայ խօսել Յուղային . « Արդ՝ զոր ինչ առնելոց ես , արա վաղվաղակի » :

Ո՞վ ցաւալի վիճակ , եւ ողբալի տեսարան . ո՞վ անվերջ յուսահասութիւն եւ անդիւտ կորուստ : Ո՞ւր կերթայ այս թշուառ հոգին , փըրկութիւն հոգւոց Յիսուս : Յուղան ուղեգնացութեան մը կը դիմէ , բայց նորա ուղեկից դու չես , այլ ագահութեան դեւն է . Յուղան զքեղ վաճառելու կերթայ , երեսուն արծաթ շահելու համար : Յուղան զքեղ կորսնցնելու կերթայ յաւիտենական կեանքէդ զրկուելուն համար : Ահա այս է եղկելի անձի մը վիճակ , երբ քէնէ հրաժեշտ տալով մեղաց կը ծառայէ , ո՞վ կեանք ու Փրկիչ Յիսուս : Քեզնէ հեռացող ամենաթշուառ հոգի մը ո՞ւր կրնայ գտնել իւր սրտի միահրարութիւն . ինչով պիտի յագեցնէ իւր սիրոյ քաղցն ու ծա-

ըաւը . կամ ո՞ր յուսով պիտի միմիթարէ ինքզինքըն : Որովհետեւ քենէ հրաժարուողին կեանքը մահ է . նորա ժառանգութիւն՝ դժոխքն է . նորա բաժին ապականութիւնն է նորա վայելածը՝ յաւիտենական տանջանքն ու անմիմիթար սու- գըն է :

Ա. Դ. Օ Թ. Ք.

Ով ամենագիթած Տէր . ահա կը ճանաչեմ, որ Յուդայի գործած ապեզախութիւնն ու յամա- ռութիւն շատ անդամ կրկնած եմ բազմագութ Տէրութեանդ երկայնմտութեան դէմ : Կը խոսառ- վանիմ, որ ամէն պատժապարտութեանս վայր- կեաններ փոխանակ պատժոյ՝ գթութիւնն ու նե- րողութիւն զրկած ես ինձ : Քանի՞ քանի անդամ Յուդայի նման տաղտկութիւն համարած եմ պատ- ուիրանապահութիւնդ, և քենէ հեռանալով՝ մե- ղաց ծառայութիւն նախընտրած եմ, և փոխա- նակ ամենակարող հովանաւորութեանդ դիմելու, սատանայական հրապոյրներուն դիմած եմ : Թէ- պէս դու ինձ ևս Յուդային ըսածդ շատ անդամ կրկնած ես . « Արդ՝ զոր ինչ առնելոց ես, արա՛ վաղվաղակի » . բայց օդնութիւնդ շուտով հասու- ցած ես անառակիս, և չես թողուցած մեղաց յարատեւութեան մէջ . և գթութեան ձեռք առ- լով ինկածս ատեն կանգնեցուցած ես խղճիս նե-

յուկին վրայ . և յուսահատական կորուստ պատ- ճառող փորձանքներէն պահած ես անարժանս շատ անդամ :

Քու խոնարհութեանդ երկիրպագանեմ, բարձ- րեալ Յիսուս : Քու գթածութիւնդ օրհնաբանեմ, երկայնամի՛տ Յիսուս . աշակերտացդ ոտքեր լուա- ցող ձեռացդ սիրոյ զոհ լինիմ, սիրագթա՛ծ Յի- սուս . ոտքերուոդ կոխած հոյլ լինիմ, Աստուած իմ Յիսուս :

Մեղօք մեռեալ հոգիս՝ քո Աստուածային սի- րոյ ճաշակ մարմնոյդ և արեանդ չնորհիւ կենդա- նացուր . և զօրութիւն տուր տկարութեանս, որ կարողանամ յաղթել դէմն ելնող աներեւոյթ թշշ- նամնոյն այսինքն սատանային : Սուրբ երկիւղիդ շղթայով զիս ամրապնդէ՛, ահաւո՛ր Տէր, որ դա- տաստանիդ արդար վրէժինդրութենէն սարսափե- լով յարատեւութիւն ունենամ պատուիրանապա- հութեանդ մէջ . և չը լինիմ կորսաեան զոհ Յու- դայի նման : Քու սուրբ սիրով կերակրէ սիրաքաղց հոգիս ու սիրոս . որ ախտաւոր սիրոյ թակարթէն ազատ մնամ, և չինկնիմ մեղաց գերութեան մէջ : Նաեւ տուր մեղուցելոյս հաստատ կամք, ուղիղ սիրտ և խոնարհ հոգի, որպէս զի կարողանամ սիրել զքեզ . սիրով ծառայել քեզ . սիրով յարա- տեւել պատուիրանապահութեանդ մէջ . և փըր- կութեանս յուսով օրհնել զքեզ, ամէն :

ԽՈՐՀՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Յիսուսի սիրոյ վերջին կտակ

Ո՞վ ամենագլուխ Յիսուս . այժմ անշուշտ կը  
ցաւիս և կողքաս Յուդայի կորստեան վրայ որ-  
դեկորոյս գորովագութ հօր մը նման, որովհետեւ  
կորուստ մը ունեցար սիրելի աշակերտներէդ :  
Յուդայի ապերախտութեան վրայ չես զայրանար,  
և քեզ դէմնորա ունեցած չարամտութիւնը չես  
յիշեր . այլ նորա անդիւտ կորուստը կը յիշես .  
ու նորա յաւիտենական մահուան վրայ կ'արտաս-  
ուես, ինչպէս որդեսէր Դաւիթ կ'արտաստէր  
հայրանենդ Սբիսողոմի մահուան վրայ :

Յիրագորով Տէր, քանի սիրային և սրտառուչ  
է այդ սիրալիր ձայնդ ու գորովական գդուանք-  
էր, զորու կը հնչես աշակերտացդ ականջներուն,  
և կը սփռես նոցա վրայ : Հայրական սիրով զա-  
նոնք քեզ որդեակներ կը կոչես, սիրախնամ բա-  
զուկներովդ կը գդուես, և նոցա վրայ կը գուր-  
գուրաս ու կը խանդաղատիս . որովհետեւ չարչա-  
գուրաս տւ կը խանդաղատիս . սիրովհետեւ չարչա-  
գուրաս մօսէ, աշակերտացդ սրտեր մահ-  
րանացդ ժամը մօսէ, սիրովհետեւ հօր  
ուանդ գառն ոգւով լցուած են : Մահամերձ հօր  
մը նման զանոնք շուրջդ առած՝ սիրոյ կտակ կը  
խօսիս . սիրոյ պատուէրներ կ'աւանդես, միիթա-  
րական և քաջալերական յորդորներ կը կարդաս  
նոցա : Յորդոր կը կարդաս, որ չխոռվին ու չվը-  
հատին մահուանդ համար, այլ քաջ սիրու ունե-

նան . բոլորովին յոյսերնին վրագ դնեն . հաւա-  
տան, որ քո մահդ նոցա համար կեանք է . հա-  
ւատան, որ դու մահէդ վերջ շուտով պիտի տես-  
նուիս նոցա . զի դու ապականացու չես, որ գե-  
րեզմանին մէջ յարատեւ մեսս, այլ անմահ արա-  
րիչ Տերն ես, որ հանուր մարդկութեան համար  
սիրոյ զոհ լինելնէդ վերջ . Աստուածային փառօք  
գերեզմանէդ յարութիւն պիտի առնես, իրենց  
պիտի երեւիս, ու փարատես նոցա սրտերէն սու-  
դըն ու արտմութիւնը : Վասահ լինին, որ երկ-  
նաւոր Հօրդ արքայութեան մէջ նոցա համար օ-  
թեւաններ պատրաստելու կերթաս : Եւ քիչ ժա-  
մանակէ վերջ՝ պիտի դաս սիրելիներդ տանիս  
անճառելի փառացդ մէջ հանդչեցնես :

Խրատ կուտաս սիրելի աշակերտացդ, որ  
պատուիրանքներդ պահեն, զի այն է Աստուա-  
ծասիրութեան նշան, և արժանացող Աստուածա-  
յին տեսութեանդ : Խրատ կուտաս աշակերտա-  
ցդ, որ ամենուն հետ, ընկերասէր լինին, և  
մարդասէր՝ հանուր մարդկութեան հետ : Որպէս  
զի մարդասէր անունով ամէն մարդոց, ճանշցուին,  
որ մարդասէր Յիսուսիդ ճշմարիտ աշակերտներն  
են : Աստուածային վճիռ կը հաստատես, որ մար-  
դիկ Աստուածասէր ու մարդասէր լինելով հան-  
դերձ՝ ինչ բարի խնդրուածներ քու անունովդ  
ինդրեն երկնաւոր Հօրէդ, անմիջապէս պիտի  
կատարուի ուղածնին :

Արդէն գիտես և կը ճանաչես, սրտագէտ Տէր,

որ մեղանչական ու տկար մարդիկ ինքնաբաւական չեն պատուէրներդ պահել, այլ յատուկ Աստուածային շնորհք մը պէտք է, որ մարդիկ ամէն առաքինութիւններ գործելու ընդունակ ընէ, և մոլութեանց դէմ զօրաւոր ընէ։ Դորա համար չոդին սուրբ կը խոստանաս զրկել առաքեալներդ եօթնարփեան շնորհօք զարդարելու, զօրացնելու և զրահաւորելու համար Սատանայի և մարմնոյ դէմ։

Աւետիս կ'ուտաս աշակերտացդ . որ սուրբ չոդին պիտի գայ զիրենք Աստուածային սիրոյ բաժակներով զմայլեցնելու համար :

Խաղաղութիւնդ կը թողուս առաքեալներուդ, ով խաղաղութիւն և կեանք Յիսուս։ Խաղաղութիւն, որ Աստուածային սիրոյդ վտակն է . խաղաղութիւն՝ որ աշխարհի խոստացած խարդախ խաղաղութեան հետ բնաւ չունի նմանութիւն, այլ բոլորովին կեանք է զինքը ճաշակողաց համար։ Խաղաղութիւն՝ որ մաքուր և անխառն է կեղծ ու խարող աշխարհային խաղաղութեան հետ։ Խաղաղութիւն՝ որ ներքին հոգւոյ մէջ լինելով՝ արտաքին փորձանքներէ և խռովութենէ զերծ ու անքսաս կը պահէ զհոդին։

Այժմ մեծ զօրութիւն ունիս աշխարհիս խըռովայոյլ Սատանային դէմ, ով ամենայաղթ Յիսուս։ Ահա նա զքեզ կրկին փորձելու և խուզարկելու համար կ'ուգայ . և ի՞նչ յանցանք կրնայ գտնել վրադ ով անարաս գառն Աստուածոյ և

փրկարար զոհ Յիսուս։ Այս, նա դէպի քեզ պիտի գայ, և ամենափոքր յանցանք մը վրադ չի պիտի գտնէ, բայց որոց համար որ սիրոյ զոհ լինելու կը պատրաստուիս, ամենքն ալ սխալական են, և տկար բնութեան ենթարկուած . նա անշուշտ իւր սրտի քէն ու ով մարդոց վրայ պիտի թափէ։ Դորա համար յառաջուց զգուշութեան լուր կը հազորդես աշակերտացդ, որ պատրաստ մեան գալիք սատանայական փորձանաց դէմ դնելու։ Եւ քաջալերական յոյս կուտաս աշակերտացդ, որ չվհատին . և քենէ անբաժան մնան, ինչպէս խաղողի ողկուզաքեր ոստերն ու ճիւղելն՝ իրենց արմատին վրայ։ Վասն զի ամենակալ չայրդ զանոնք խնամող ու պահպանող մշակն է։

Ազդարարութիւն կ'ուտաս սիրելի աշակերտացը, որ նոցա առաջ շա'տ վիշտ ու նեղութիւն կան . և շատ անդամ քաղցած ու ծարաւած մնալով, յուշ կ'ածես սիրելի աշակերտներուդ, որ այս աշխարհիս ուրախութեան ու զուարճութեան հետ մասն ու բաժին չունին, զի այն՝ աշխարհասէր մարդոց բաժինն է . այլ քո Աստուածային անանց ուրախութիւնը ժառանգողները պէտք է ժամանակաւոր սուգն ու տրտմութիւնն ունենան իրենց բաժին . և ապա երթան յաւիտենական ուրախութեան հասնին . և յանժամ պիտի մոռնան այժմեան կրած բոլոր նեղութիւններն ու տրտմութիւններն, ինչպէս զաւակ բերող կին՝ որ ծնելէ վերջ՝ իւր զաւկի վրայ ուրախանալով՝ կը

մոռնաց իւր ծննդաբերութեան անտանելի երկունքըն ու ցաւը։ Այս յոյսերով աշակերտաներդ կը քաջալերես, նոցա ձայնելով։ «Քաջալերացրուք, զի ես յաղթեցի աշխարհի։» և յաւիտենական կեանք պարգեւեցին ձեղ։

Ահա Սիօնի վերնատունէն դէպի Դեթսեմանի ձոր կիջնես սիրելի աշակերտաներովդ, սրտառուչ սիրաբանութիւնդ շարունակելովդ։ Սիրատարած բազուկներդ ուռ սիրախնամ չայրդ վերցընելով՝ սիրագորով աղաշանքներ կ'ընես աշակերտացդ համար մարդկային խոնարհութեամբդ։ Կ'աղաչես, որ բարձեալ չայրդ իւր ամենազօր աջոյն հովանաւորութեան ներքեւ պահէ անձնուէր աշակերտաներդ, և իւր որդեգիրներ ընդունի զանոնք։ Կ'աղաչես՝ որ Հօրդ խնամքն ու գութ միշտ աշակերտացդ վրայ լինին, որպէս զի նոքա եւս Յուդայի նման չըլինին գժոխոց բաժին։ Կ'աղաչես նաև, որ ամէն հաւատացեալներդ աշակերտացդ հետ ժառանգակից լինին քեզ, և հաղորդակից՝ Աստուածային փառացդ։

Ա. Պ. Ո Թ. Փ.

Ամենողո՞րմ Տէր, յիշէ՛, որ ես ալ հաւատացեալներէդ եմ. յիշէ՛, որ ես ալ քու արիւնագին ժառաներէդ մինն եմ. յիշէ՛, ո՛վ սիրախնամ Տէր, որ ես ալ երկնաւոր Հօրդ որդեգիր եղած եմ։

Ո՞հ, որդի, այլ անպիտա՞ն որդի, անհնազա՞նդ որդի, անհաւատարի՞մ որդի, ապերա՛խտ որդի, անառակ և անարժա՞ն որդի։

Ահա անհուն ողորմութեանդ կը դիմեմ, ամենագո՞ւթ Տէր. ահա անշափ մարդասիրութեանըդ կը յուսամ, սիրոյ զոհ Տէր. ահա բազմազեղ ներողութեանդ կ'ապաւինիմ. բազմագո՞ւթ Տէր։ Մի՛ զրկեր զիս սիրագիթած պաշտպանութենէդ. մի՛ մերժեր հովանաւորութենէդ, և մի՛ թողուր, որ քենէ հեռանամ, ու մեղաց գերի լինիմ, ինչպէս մատնիչ Յուդան եղաւ։ Ոհա կը յիշեմ Քանահացի կին և անսուակ որդին. և նոցաթախանձանօք զրեղ կ'աղաչեմ, լսէ մեղաւորիս, ինչպէս Լուեցիր Քանանուհոյն. գթա՛ ողորմելոյս վրայ, ինչպէս անառատին վրայ գթացիր։

Կենարար մարմնոյդ և արեանդ շնորհիւ զիս ա՛լ ամենայետին մը համարէ կենացդ գպրութեան ցանկին մէջ։ Զիս ա՛լ սիրելի աշակերտացդ հետ պատուաստէ՛ կենաց արմատի ոստերուն վրայ, որպէս զի փշաբեր մոլութեան ոստա ալ առաքինութեան պատողներ ունենամ։ Զիս ա՛լ ամենախընամ Հօրդ հովանեաց յանձնարարէ՛, որպէս զի մշտադալար ճիւղի նման հաստատուն մնամ կենաց ծառիդ վրայ։ Ամենասուրբ Հոգւոյդ սիրոյ աղբիւրով ջուր տուր բանտուր տունկիս, որ պլազազուրկ չը լինիմ մոլութեան կարկուտներէն։ Մուրբ առաքեալներուդ ուսուցած ուղղադաւան հաւատայ ցանկով ըջապատէ զհոդիս, Տէր, որ

ապականիչ աներեւոյթ սատանային ոտից կոխան չը լինիմ։ Բանաւոր այգիս պահող մոտացս արթնութիւն տո՛ւր, ո՞վ Տէր, որպէս զի անմարմին գողերուն կողոպտել չի տամ հոգեկան բարեգործութեան պատուղներն, որպէս զի փրկութեան յուսով հոգիս քեզ աւանդեմ. ամէն։



ԽՈՐՀՈՂԱԾՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Յիսուս աղօթէ ի պարտիզին

Կէս գիշերուան խոր քնոյ ժամանակն է. ամենուրեք հանգիստ ու լուսութիւն տիրեր է, Մարդերն ու անասուններ իւրեանց բնակարաններուն մէջ քաղցր քուն ու հանգիստ կ'առնուն։ Իսկ դու՝ ո՞վ պարգեւիչ քնոյ և հանգստեան Յիսուս, ոչ քուն ունիս, ոչ հանգիստ. այլ մահահրաւէր ցաւն ու երկիւղն զքեզ պատեր են։ Եւ այսու ամենայնիւ սգալից աշակերտներդ անկարեկից չես թողուր, այլ հայրաբար գութ ու խնամ. կ'ածես նոցա վրայ։ Հրաման կ'ընես, որ Գեթսեմանի գիւղն երթան, հսն իրենց լացող աչքեր խփելով մի քիչ քուն ու հանգիստ գանեն։

Միայն Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս՝ երեք հաւատարիմ խորհրդակիցներդ հետդ առնելով՝ աղօթավայր պարտէզը կը մտնես։ Չես ներեր այս

երեք մտերիմներուդ, որ միւսներուն պէս երթան քնանան. այլ պատուէր կուտասս, որ անքուն արթնութեամբ հետդ հսկեն ու աղօթեն։ Ինչպէս արդէն ուրիշ անդամներ ալ սովորութիւն ունէիր առանձնանալ այդ երեք մտերիմներուդ հետ, երբեմն մեռեալ դիակին կենդանութիւն տալով, և երբեմն ալ մարմնոյդ մէջ ծածկեալ Աստուածութեանդ փառքը լուսափայլելով։ Խոկ այս առանձնութեանդ ատեն ոչ մեռեալներ յարութիւն կ'առնուն, և ոչ ալ Գեթսեմանի ձորն Աստուածային լուսովդ կը պայծառանայ, այլ միայն մարմնական երկիւղն ու մահուան տագնապը վրադ կը տեսնուին։

Պատուէր կ'ուտասս վշտակից աշակերտացդ, որ հոկեն ու աղօթեն, որպէս զի սատանային՝ այն աներեւոյթ թշնամւոյ լարած որոգայթներուն մէջ չինան։ Մտերմական սիրով կրածդ տագնապալից ցաւն ու երկիւղը կը յայտնես տրտմակիցներուդ. « Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ, մեացէք աստ, և արթուն կացէք։ » Այս խօսքդ ըսելով մէկ կողմն կը մեկուսանեսս, և հոն ծնկերուդ վրայ կը խօնարհիս երկնաւոր Հօրդ առաջ, որդիական ակնածութեամբ սիրատարած բաղուկներդ վեր վերցնելով կ'աղօթես արիւն քրտինք թափելով։ Կ'աղաչես Բարձեալ Հօրդ առաջ՝ որ եթէ մարդոց փրկուելու հնար կայ առանց չարչարուելուդ ու մեռնելուդ, մահուանդ բաժակն յետ առնուի, որպէս զի մարդիկ ալ առանց վիշտ

ու չարշարանք կրելու՝ երկնից արքայութիւնը ժառանգեն։ Իսկ եթէ առանց չարշարուելուդ մարդոց փրկութիւն անվարելի է։ դու արդէն սիրայօժար ես սիրոյ զոհ լինիլ մարդոց փրկուելուն համար։

Այս տագնապալից ցաւոց մէջ անդամ միսիթարութեանդ կարօտ աշակերաներդ անխնամ չես թողուր, այլ դժութեամբ այցելութիւն կուտաս նոցա, և գանոնք գանդալիստ քնոց մէջ ընկ կը կըզմած գտնելով, մեզմ յանդիմանութիւն կ'ուտաս, կը ստիպես կը յորդորես և կը քաջալերես, որ ծուլութիւնն ու հեղդաւթիւնը մէկ կողմը ձլդեն, քաջ կենան, աշխայժ ջանքով ազօթեն, որպէս զի ազօթքով զօրութիւն ստանան յազթել ստանային այն անմարմին թշնամեցն։ և չը լինին Յուդայի նման կորսուեան զոհ։

Ահա նորէն կը կրկնես աղաչանքդ, և գարձեալ կը կրկնես, և ի՞նչ է այս երեք անդամ մի և նոյն ինդիրն ստէպ ստէպ կրկնելուդ նպատակըն, ո՞վ սիրոյ զոհ Յիսուս։ Ո՞չ ապաքէն աշխարհք ստեղծելէդ առաջ գիտէիր, որ մեզօք դատապարտեալ մարդոց փրկութիւն միայն այդ կըրածդ չարշարանքով պէտք էր լինիլ. և ահա այդ գիտմամբ չէ՞ր, որ մարդարէից գուշակմամբ մարդեղար. որ մարդկան համար զոհուիս, և գունչէի՞ր, որ փրկարար Աւետարանդ քարոզած ատեն փափաք կը յայտնէիր օր յառաջ համիլ այդ մահուանդ բաժակին. «Մկրտութիւն մի ունիմ

մկրտել, և զի արդ փութամ, մինչեւ կատարեսցի»։ Իսկ այժմ մոռցուածն է այն սիրոյ խոստումը ու առաջարկութիւնդ։

Ո՞չ, ո՞չ, ամենիմաստ Տէր, ես այսպէս կը հաւատամ, որ խոստումդ անմոռանալի է և վըճիւդ անդառնալի է։ Ես այսպէս կը հաւատամ, որ այս կերպ ազօթելովդ հնազանդութեան օրինակներ կ'ուղես առաջատացեալներուդ։

Կ'ազօթես առանց ձանձրանսալու և առանց վըհատելու որպէս զի մարդիկ ալ այս օրինակիդ հետեւելով շարունակեն իրենց ազօթքն ու խընդրուածք ամենակալ չօրդ առաջ, մինչեւ նորա որոշութեամբ համնին փրկութեան ճանապարհին։ Կ'ազօթես չօրդ կամաց հաւանութիւնն առնելու համար, ո՞չ թէ անակեղեակ ես չօրդ կամաց, այլ մարդոց տեղեկացնել կ'ուղես, որ իրենց սիսալ որոշութեան վրաց չը յամառին, այլ վսաահ լինին չօր Աստուծոյ, որոց կամքն ու հաճութիւնը միշտ բարի և օգատակար է իրեն հնազանդով ազօթաւորաց համար։ Կ'ազօթես գարձեալ, և չօրդ պատգամանորեր հրէշտակէն քաջալերութիւն կ'առնուա, չմերժել չօրդ զրկած մահուան բաժան։ այլ ընդունիլ զայն սիրայօժար կամօքդ. ո՞չ թէ կարօտ ես ամենազօր Արարիչդ արսարածէդ զօրութիւն ու քաջալերութիւն ստանալ. այլ խոնարհութեան և հնազանդութեան օրինակ կ'ուտաս մարդոց, որ թէկ Ամենակալ չօրէդ օգնութիւն կը խնդրեն, բայց խոնարհու-

թեամբ կը սպասեն այն որոշողութեան, որ ամենագութ Հայրդ մարդոցմով մարդոց համար տալ պատրաստած է:

Ականատես աշակերտացդ ներկայութեամբ կ'ազդես, և արիւն քրտինք կը թափես, որպէս զի ծշմարիտ մարդ ըլլալդ հաստատես ծշմարիտ վըկայիցդ առաջ: Պարտէզին մէջ պարտաւորցուցիք նախահայր Ադամը, որ երեսի քրտինքով իւր հացըն ուտէ: Եւ ահա այն պարտքն է, զոր այժմ Գեթսեմանի պարտէզին մէջ անձամբ կը վճարես ո՛չ լոկ քրտինք կը թափես երեսներէդ, այլ արիւնախառն քրտինք կը քամես կուսածին ամբողջ մարմնէդ, ո՛վ Ադամայ մեղաց բարձող Յիսուս:

Տաղնապալից ցաւօք կ'ազօթես, սաստիկ կը տրտիս և կը հոգաս, ո՛չ թէ անձդ կը խնայես, այլ կը հոգաս ու կը ցաւիս. որ շատ մարդեր իւրեանց անհաւատութեամբ ու անդարձութեամբ ապարդիւն պիսի հանեն իրենց համար քու կը րած չարչարանքն ու մահը:

Այժմ անշուշտ կը յիշես ապերախտ ու խըստասիրտ աստուածապաները, կը յիշես մատնիչ Յուղայի ըրած գաւաճանաւթիւնը, զոր անհաւատ Փարիսեցւց հետ կը գործէ այդ ըրած երախտեաց դէմ: Կը յիշես և կը ճանչես որտագէտ Տէր, այն ապագայ սուս քրիստոնէից ընելիք չարագործութիւնները, զորս եղածէն առաջ կը րածործութիւնները, զորս եղածէն առաջ կը հշուես, մատնիչ Յուղայի չարագործութեան հակառակ, կամ աւելի: Ահա զոյցա համար է կը պատրաստես

ծըդ արտմութիւնն ու հոգածութիւնն, ո՛վ ամենագութած և ծածկատես Յիսուս:

Երկնաւոր Հօրդ պատգամարեր հրեշտակն ահաւասիկ կ'ուգայ քեզ համար պատրաստուած մահու բաժակավ, ո՛վ սիրոյ զոհ Յիսուս: Բաժակ մը քեզ կը ներկայացուի, որոյ մէջ կը պարունակուին այն սոսկալի չարչարանքն ու մահը, որ աշխարհիս սկիզբէն մինչեւ ցկատարած՝ մարդոց ըրած և ընելիք չարագործութեանց հաւասարակրչիու պատիմէն է: Այսչափ պտափիծ կրող բաժակըն է, զոր ամենակալ Հայրդ քեզ կը ներկայացընէ, որպէս զի յանձնառու լինիս զայն մինչեւ վերջ քամել: Եւ գու պարտական կը հանդիսանա անթերի կատարել Հօրդ կամքն ու հաճութիւն: Եւ այս բաժակի ծանրութիւնն ու գառնութիւնն են, որ արիւն քրտինք հանել կուտածին մարմնէդ, որ փափուկ և դգայուն մարմնով յանձն կ'առնուս ըմպել գառն բաժակը մինչեւ յեալին կաթիլն, ո՛վ անձնագիր սիրոյ զոհ Յիսուս: Եւ այնուհետեւ մարմնական երկիւզը մէկ կողմ ձգելով, միայն մարմնոյդ փափուկ ըզդայութիւնը կը պահէս, որպէս զի յայծ ազդու և զգալի լինին կրած տանջանքներուդ ցաւն ու կսկիծն: Եւ պատգամարեր հրեշտակ բիւր երկըրպագութիւն ու փառաբանութիւն տալով ահաւոր բարձրելցդ՝ յերկինս կը վերանայ:

Ա. Վ. Օ Թ. Ք

Ովքարձր և խոնարհ Տէր, երբ դու՝ որ անկարօտ ես աղօթքի և օգնութեան, այսափ կը բած արտմալիծ վիճակիդ մէջ լինելով հանդերձ տակաւին աղօթելուդ միջոց չես տար, այլ ստէպ ստէպ աղօթքիդ կրկնելով օգնութեան կը սպասես իսկ ես եղկելիս, որ աղօթքի և օգնութեան կարօտ եմ, ո՞րչափ գատապար առութեան արժանի եմ, որ երբ ցուրտ ու գաղջ սրտով աղօթքի կը կենամ, աղօթքս շուտով վերջացնել կ'աճապարեմ, և երբ փորձութիւն փրաս գալու լինի, բնաւ աղօթելու կարեւորութիւն չեմ տար, և զբեզ օգնութեանս չեմ կոչեր, որ ամէն շնչոյն տուրեառութեան օժանդակութեանդ կարօտութիւնն ունիմ:

Ահա կը խոսառվանիմ, Տէր, որ երբ մեղաց մէջ զիս կը գտնեմ, պատճառ սրտիս թուլութիւնն ու գաղջութիւնն են. և կամ այն է պատճառն, որ փորձութեանս ատեն չեմ դիմէր աղօթքի և օգնութեան. այլ անսանձ կրիցս և անարդ հաճոյքիս կը հետեւիմ, որով անդօրծադրելի կը մնայ ամենաղջու պահպանութիւնդ թըշուառ անձիս փրայ:

Ահա սիրատարած բազուկներուդ հովանաւորութեանը կը դիմէմ, գթառա՛տ Տէր, թմրած սիրատ արթնցուր մեղաց քնոյ ապշութենէն: Ամենակեցոյց զօրութեանդ կը յուսամ, յուսացե-

Է՞ց ապաւէն Տէր. մեռած խղճիս կենդանութիւն առ'ւր. որպէս զի կարողանամ վերականգնիլ մեղաց անկումէն: Սուրբ առաքելոցդ վրայ ունեցած գթութեանդ ու խնամոցդ կը կարօտիմ, սիրախնամ Տէր, մեղօք խաւարեալ մոքիս լուսաւորութիւն, և լքեալ սրտիս ու հոգւոյս զօրութիւն առ'ւր. որպէս զի լուսաւոր մոօք, մաքուր սրտով ու խղճով ու զօրաւոր հոգւով աղօթեմ գիմացդ և օգնութիւնդ խնդրեմ: Տուր ինձ նաև համբերութիւն ու խոնարհութիւն, որպէս զի յօժար կամօքս վերցնեմ այն խաչը, զոր ինձ համար կրելու որոշած ես, ո՞վ երկայնամիտ Տէր: Տուր ինձ վրայ գրածդ պահապան հրեշտակին պահպանութիւնն ու օգնութիւնը, որպէս զի անով ազատ մնամ մեղաց արկածներէն:

Ամենազօր Տէրութիւնդ փառաւորեմ, բարձրեա՛լ թիսուս: Սուրբ քրտինքովդ ու արիւնովդ թրջուած հողը լինիմ, ո՞վ անձնազոհ թիսուս: Տուր ինձ քու սիրոյ և խաղաղութեան ճաշակը, որպէս զի կարողանամ յարատեւել պատուիրանապահութեանդ շրջանին մէջ, ու սուրբ կամացդ համեմատ քեզ ծառայել. ամէն:

ԽՈՐՃՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԶՈՐՅՈՐԴ

Յիսուսի մատնուրիւն եւ ըմբռնումն

Խորհրդաւոր աղօթքդ աւարտեցիր, ամենազօր Տէր. Երկնաւոր Հօրդ քեզ զրկած մահու բաժակն ընդունեցիր. այժմ անձնադիր զօրագլուխտ կը պատրաստուիս զքեզ բռնողներուն դիմաց ելնել, մատնիչ Յուդայի նենդադաւ համբոյրն ընդունիլ, ձեռօք կապուիլ և ի բանտ Երթալ. Բայց նախ սիրելի զօրական, աշակերտներուդ սրաադորով ձայնդ կուտաս. «Արիք Երթիցուք, զի ահաւասիկ եհաս, որ մատնելոց է զիս»

Սատանայ տեսաւ արդէն մարմնական արտամութիւնդ ու արիւն քրափինք թափելդ. տեսաւ՝ որ մարդկային ահով ու երկիւզով պաշարուեցար: Դոցա համար նա յուտովէ. որ յաղթութիւն ինքը պիտի վաստիի. ուստի մատնիչ Յուդային հըրահանդ կուտայ, որ համբուրելով մատնէ զքեզ Պիղատոսի զօրականաց ձեռքք: Զօրաց ալ խրախոյս կուտայ. որ առանց վախնալու և առանց խնայելու ձեռքերդ կապեն և տանին բանտարկեն: Հրեից ալ խորհուրդ կուտայ. որ ճշմարիս Մեսիան չես, այլ խորեբայ և Երկուա մարդոց մինն ես. և անարդաբար խաչուելու և մեռնելու արժան ես, իսկ ադահասիրտ Պիղատոսին վրաց

արդէն վստահ է, որ իւր կամակատար արբանեակն է:

Ահա Յուդա մի ամբոխ հետն առած՝ դէպի քեզ կուդայ, և քեզ համբուրելու կը յանդգնի, բայց դու ո՛վ երկայնամիտ Տէր, տակաւին երկայնմութիւնդ կը պահես. տակաւին քաղցրութեամբ նորա հետ կը խօսիս. «Յուդա համբուրելո՞վ մատնես զմբդի մարդոյ:» Ո՛վ ահաւոր բարձեալ տէր, ի՞նչպէս կը ներես, և ի՞նչպէս կը համբերես այդ անպատկառ ու լիրք համբուրման, որ յայտնի մուերմական երեւոյթ մը կը տեսնուի. և ծածուկ թշնամական դաւագրութեան տեսարան մը կը լինի, և կը ներկայանայ առաջդ: Յուդան իւր համբուրմամբ խաղաղական ողջոյն կուտայ քեզ, և հետը եկողներուն՝ զքեզ բռնելու և կապելու նշան կուտայ:

Ո՛վ սարսափելի Երեւոյթ եւ ապշելի տեսարան: Ահա խոտարտութիւն մի, որոյ վերջն ու վախճան անփրկանաւոր կորուստ մը կ'երեւակայէ: Ահա գործ մը, որոյ վարձքն ու հատուցում յաւիտենական տանջանին է: Արդարադա՛տ Տէր, դու խալառ գթութեան խնամքդ վերցուցած ես Յուդայէն. որովհետեւ նախ նա՛ մերժած է քու իրեն ըրած երկայննուութիւնն ու մարդափրութիւնը: Ասկէ վերջ նորա բաժին յուսահատական ինքնասպանութիւնն ու մշտնջենական կորուստն են:

Ահա զինորաց խումբով պաշարուած են ա-

շակերտներդ, անմատչելի՛ Տէր: Դու մարդկային հարցում կ'ուզզես զինուորաց. « Զո՛ ինդրէք. » Եւ մարդկային ձայնէդ Ասառածածային ահաւորութեան մը կը փայլատակէս բոլորտիքդ հաւաքուած Յուգային և ամբոխին վրայ. որոնք յետ յետ քաշուելով գետնի երես կը փռուեն. և միայն երեք աշակերտներդ կանգուն կը թողուս:

Ով ահարկուուդ երկնի եւ երկրի, եթէ այդ մեզմ ու քաղցր ձայնդ զմարդիկ մեռելի նման գետին կործանեց, հապա երբ լի բարկութեամբ ահեղադու բարբառով պիտի ձայնես դատապարտեալնեխուն. « Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, » այն ատեն ս՞րչափ անտանելի պիտի լինի նոցա կրած ահ ու սարսափր:

Այո՛, երկայնսամի՛տ Տէր, այդ գետին ինկածներն ալ անգունդ իջնելու արժանի են, բայց խնամական ակնարկ մը վրաներ դարձնելովդ ոտից վրայ կը կանգնեցնես, և նոցա սպառած կարողութիւնը նորէն իրենց կը դարձնես: Ոհ, նոքա քենէ ուժ առնելով վրադ կը յարձակին բըռնելու և կապելու համար:

Ամէն արարածներդ անմռռանչ ձայներով վրէժինդրութիւն կ'աղաղակեն. բայց դու լոռութիւն, լոռութիւն, կը պատասխանէս վրէժխընդրութեան դէմ:

Գետին վրէժխնդրութիւն կը պահանջէ անյատակ վիճ ոը բանալ բռնողներդ խորասուզելու համար. բայց չունի հրաման: Հրեղէն դունդերդ

երկինքէն հրոյ անձրեւ տեղացնելու համար վրէժխնդրութիւն կը պահանջէն, բայց չունին հըրաման: Դժոխքը նոյնպէս վրէժխնդրութիւն կը պահանջէ: այլ դու գոցած ես նորա բերանը:

Այս վրիժապահանջ արարածներներէդ՝ միայն Պետրոսի սուրբ՝ Մարգրոսի ականջը իւր տեղէն կը փրցնէ. քու հրամանիդ հակառակ: իսկ դու զայն եւս Պետրոսի ձեռօք իւր պատեանին մէջ կ'ամրափակես, և սաստելով հրաման կ'ընես Պետրոսին, որ այլ եւս սուրբ իւր տեղէն չը հանէ: Եւ Մարգրոսի ականջն առաջին պէս կ'ողնցնես. Եւ դու եւս Աստուածային զօրութիւնդ մարմայդ մէջ կ'ամփոփես. և իրեւ ամեղ գառն՝ մարդագայլերուն առաջ կը կենաս: Ոչ կ'աղաղակես, և ոչ կը դիմադրես. այլ թոյլ կուտաս բռնողներուդ, որք ոչ գութ գիտեն, և ոչ խնայողութիւն. այլ գաղանային կատաղութեամբ վրադ կը յարձակին: Ոմանք հրաշագործ ձեռքերդ կը կապեն, ոմանք կապանքներդ կ'ամրապնդեն արիւն հանելու չափ. ոմանք պատկառելի դէմքդ կ'ապտակեն. ոմանք Աստուածային երեսներդ կը թքնեն. և այլք կեղրոնի հեղեղատին սուր քարերու և խիճերու վրայ ձեղելով ու քաշկռտելով զքեզ՝ քահանայապետին տունը կը տանին:

Ո՞վ ամենայաղթ և համբերատար Փրկիչ։ Ահա ներկայ է քեզ սատանայի ունեցած կատաղի և դաժան ոխն ու ատելութիւն մարդկութեան դէմ։ ահա՝ քեզ վրայ կ'երեւին սատանայի տուած նախատինքները ու թշնամանքները, զորս տառապեալ մարդոց վրայ կը թափէ միշտ, զանոնք յուսահատեցնելու՝ և քեզ դէմ մեղանչել տալու համար։ Որովհետեւ մարդկային ազգ քու սուրբ արիւնով գնուած է։

Յիշէ՛, ո՞վ ամենախնամ։ որ ես ալ կենարար մարմնոյդ և արեանդ գինն եմ. յիշէ՛, որ սատանայ քեզ դէմ ունեցած նախանձն ու բարկութիւն՝ տառապելոյս վրայ կը թափէ։ չարաչար մեղանչել տալով զիս քու սիրոյն դէմ։ Յիշէ՛ սիրագութչէր, որչափ դու իմ անկմանս վրայ արտում կը լինիս, սատանայ այնքան ուրախ կը լինի։

Ահա քեզ կը բողոքեմ, Տէր, զրկանք կրող տառապեալ այրի կնոջ նման։ «Դա՛տ արա՛ ինձ յոսուխէ իմմէ՛» Ամենասուրբ անուանդ համար ազատէ՛ զիս մեղաց գերութենէն ամենակա՛ Տէր։ Սատանային բոնութենէն ու մեղաց կապանքէն ազատէ զհոգիս, ազատարա՛ Տէր։ նոր սիրուալու մեղօք հնացելոյս, նորոգի՛ Տէր։ որպէս զի ընդունակ լինիմ չնորհացդ։ և կարողանա՛մ հրաժարիլ մեղքէն, և քեզ ծառայել։



Բանտարկութիւն Յիսուսի, եւ ուրացութիւն  
Պետրոսի

Ո՞վ արդարութեան օրէնսդիր Յիսուս, ահա արդարութեան օրէնքէն չեղուած Աննա քահանայապետն իբրեւ արդարադատ կը ձեւանայ, և քեզ վրայ օրինազանցութիւն կը փնտուէ։ Նենդամիտ Աննա նենդադաւ հարցումներ քեզ կ'առաջարկէ։ զբարտիչ ու սուա վկաներն զքեզ իբրեւ յանցաւոր կ'ամբաստաննեն։ Բայց մոլորաշաւիլ ժողովականներէն ո՞վ պիտի ջատագով լինի ճշմարտութեանդ, և անմեղութիւնդ ո՞վ պիտի պաշտպանէ։ անպարտակա՞ն Յիսուս։

Աննա վրադ բոնանալով պատասխան կը պահանջէ։ և դու թէպէտ մէկ խօսքով զայն կը պապանձեցնես, բայց նորա յանդուղ ծառան ճշմարիտ խօսքդ իբրեւ յանդգնութիւն կը դատէ, և անպարտ տեղ Աստուածային երեսդ ապտակելով վրադ կը խրոխստայ։ «Այդպէ՞ս պատասխանի տաս քահանայապետիդ։» իսկ դու՝ ո՞վ ահաւուրդէ հրեշտակաց։ ապակողիդ ձեռքը չես չորցըներ, այլ միայն նորա անիրաւութիւնը կը յանդիմաննես հեղութեամբ։ «Եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա՛ վասն չարին։ իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս։» Ահա այս խօսքովդ օրինակ կուտաս, որ մարդիկ հեղութեամբ խօսելու են,

և ոչ թէ հպարտութեամբ ու բարկութեամբ։  
Աննայի առաջ անիրաւաբար չարախօսուեցար.  
ու անարդութեան ապտակն ընդունեցիր, Փրկիչ։  
այժմ կայիսափայի գիմացը կը ներկայացուիս։  
Արդե՛օք կրնա՞յ յուսացուիլ, որ այս երկրորդ  
ատեանին մէջ արդարութիւն պաշտպանող անձ  
մը գտնուի. ո՛չ, ո՛չ, Տէր. զի դոքա են Աստուա-  
ծասպան ամբողջ ժողովուրդը քու դէմի թշնա-  
մացնողներ. դոքա են քու անհաջող սիսերիմ թըշ-  
նամիներդ. որովհետեւ դու միայն ճանաչեցիր  
ու գիտցար դոցա խորամանկ բնաւորութիւնն, և  
դու յայտնի յանդիմանեցիր դոցա ներքին կեղ-  
ծաւորութիւնը։ Դորա համար անյագ է դոցա  
չար նախանձն ու ատելութիւն քու դէմի։ Ուս-  
տի օրէնքն խաղալիկ դարձուցած են իրենց կրի-  
ցըն ու անձնաշահութեան։

Կայիսափայի ընարած սուտ վկաներն զքեզ կ'ամ-  
բաստանեն իրեւ ինքնակոչ թագաւոր՝ Հրէից  
չովմայ դէմ. իրեւ օրինազանց ու մոլորեցու-  
ցիչ՝ Հրէից դէմ. նաեւ Որդի Աստուծոյ լինիդ,  
զօր Աստուծոյ դէմ իրեւ հայնայութիւն կ'ամ-  
չօր Աստուծոյ դէմ իրեւ հայնայութիւն կ'ամ-  
բաստանեն։ Իսկ դու կը լուես, կը համբերէս եւ  
կ'երկայնամուես։ Կայիսափան յանուն բարձեալ  
Հօրդ՝ քենէ երդում կը պահանջէ, որ ճշմարիտը  
խօսիս։ Բայց դու՝ որ լուելու և խօսելու պատ-  
շամանակները լաւ գիտես, այժմ կը խօսիս,  
շաճ ժամանակները լաւ գիտես, այժմ կը խօսիս,  
որ դու ինքդ ես բարձեալ Հօր Որդին, ու մար-  
դու դարէից նախագուշակած ճշմարիտ Մեսիան. որ

Եկած ես, ոչ թէ օրինաց դէմ հակառակիլ այլ  
օրինաց թերին լեցնել. Եկած ես, ոչ թէ չոռվ-  
մայ դէմ ժողովուրդն ապստամբեցնել, այլ ու-  
սուցած ես զանոնք, որ կարեր հարկը՝ կայսեր  
վճարեն, ու Աստուծոյն Աստուծոյ։ Եկած ես.  
որ չարչարուիս ու մեռնիս՝ զմարդիկ մեղաց մե-  
ռելութենէն կենդանացնելու համար։ Եկած ես  
մեղօք փակուած երկինքը բանալու, և զմարդիկ  
հետդ հոն տանելու համար։ Ենորէն պիտի գաս  
ահեղ հրապարակաւ ընդհանուր տիեզերքը ար-  
դարութեամբ դատելու համար։ « Յայսմ հետէ  
տեսանիցէ՛ք զմարդի մարդոյ նատեալ ընդաշմէ զօ-  
րութեան, և եկեալ ընդ ամպս երկնից։ »

Կայիսափայ նախանձարեկ կը լինի ճշմարիտ  
խօսքիդ վրայ, Որդի Աստուծոյ ըլլալդ հայնու-  
թեան յանցանքի տեղ կը դնէ. գազանային բար-  
կութեամբ լցուած՝ ատամները կը կրծաէ, դէմքը  
կ'այլանդակէ, հանդերձին օձիքը կը պատռէ, մո-  
ւեգնաբար ձայն ու աղաղակ կը հանէ, և դատա-  
պարտուելուող վճիռը ժողովականներէն կը պա-  
հանջէ։ « Հայնոյեաց, զի՞ եւս պիտոյ են մեզ  
վկայք. ահա՛ արդ լուայք զհայնոյութիւն նորա։ »

Ո՞վ անմեղ դառն Աստուծոյ. անօրէն ժողո-  
վայն մէջ շրջապատուած ես. Եթէ լուես, և եթէ  
խօսիս. յանցաւոր կը դատուիս. և ո՞վ պիտի  
պաշտպանէ զքեզ այդ արդարազուրկ ատեանին  
մէջ, ոչ ճշմարիտ օրէնքը և դատաստան կայ. ոչ  
խիղճ, և ոչ սրախ դութ կայ։ Զի դոքա ամէնքն

ալ անհաշտ թշնամիներ են գեղ. և ոխերիմ Ան-  
նային ու կայիշափային մոլեկան կրից ու անձնա-  
շահութեան ծառաներ։ Կայիշափան զեղ կը  
զրպարտէ, Փրկիչ, և ո՞վ կարող է արդարու-  
թիւնդ պաշտպանել. քահանայապետ մը զեղ կը  
դատապարտէ, և ո՞վ կարող է նորա վճռոյն դի-  
մագրութիւն ընել։ Եւ ահա ամէն բերաններէ ե-  
լած վճիռն ու աղաղակն այս է. «Մահապարտ  
է» Ոմանք կը հայհոյեն, ոմանք կը նզովեն եւ  
կանիծաբաննեն զեղ։ ոմանք կապտակեն և կը  
թքնեն Աստուածային երեսներգ, և մեծ անար-  
դանօք ատեանէն հանելով կը բանտարկեն։ Ուր  
անգութ պահապաններով շրջապատուած՝ նոր  
նոր խաղերով ու կատակներով կը տանջուիս ու  
կը նախատուիս Քօղ կը ձգեն պատկառելի դէմ-  
քիտ վրայ, ստէպ ստէպ ապտակներ ու հարուած-  
ներ գլխայդ վրայ կ'իջեցնեն, լրբենի ծիծաղներու  
ձայներ կը հանեն, և հարցում կ'ընեն. «Մար-  
դարէաց, ո՞վ է, որ եհարն զեղ»

Ո՞վ ահաւոր և բարձեալ Տէր, արդե օք Աս-  
տուածային ահաւորութենէդ սարսափող ու գէմ-  
քերնին ծածկող հրեշտակներն ի՞նչ ահ ու գողի-  
կարմացման մէջ կը գտնուին, երբ զքեզ այդ  
անտանելի անարդանաց մէջ համբերող կը տես-  
նեն:

Արդե՛օք աշխարհիս մէջ կա՞յ այնպէս անարդութիւն մը, որ այս կրածդդ անարգութեան հաւասար լինի։ Ովկ երկայնամիս Յիսուս։ Այս՝

սրտագէտ Տէր . Երբ քեզ հաւատացեալ մարդիկ  
մեղսակից կը լինին իրարու , և մութ խորչերն ու  
անկիւնները կ'առանձնանան , ուր մարդոց տեսու-  
թենէ ծածուկ անառակութիւններ կը գործեն ,  
չնկատելով , որ դու դիտես և կը տեսնես ամէն  
դաղտնի գործքերը : Եւ ահա այսպիսի գործքե-  
րով դու միշտ կը նախատուիս ու կ'անարգուիս  
անառակ մարդերէն :

Ա. Անագութ Տէր . ահա այսքան դառնակը մ-  
կիծ ցաւերուղ վրայ՝ ցաւ մի եւս կունենաս :  
Սիրելի և հաւատարիմ Պետրոսի չարչար ան-  
կումը կը դիմես , և սաստիկ կը ցաւիս ու կը վը-  
տանաս : Պետրոս՝ որ պահ մի առաջ զինքը քեզ  
անձնուելո զօհ կը խոստանայր , այժմ կ'ուրանայ  
ըսել թէ ես ալ Յիսուսի աշակերտներէն եմ : Պետ-  
րոս՝ որ մի քիչ առաջ կը խոստանայր մինչեւ մա-  
հու վերջին կետ չթողուլ զքեզ . այժմ առանց  
չարչարուելու կը թողու զքեզ : Նա՝ որ ետեւէզ  
եկած մինչեւ քահանայապետին դրան առաջ քե-  
նէ չզատուելու սիրով . այժմ թուլասիստ ազդիկէ  
մը վախնալով , զինք քեզ անձանօթ մէկ մը կը  
ձեւացնէ , և զքեզ արգելարանին մէջ զանց ընելով  
բակին մէջ վառուած կրակին շուրջ նստողներուն  
հետ կը նստի : Ուր երեք անդամ զքեզ կ'ուրա-  
նայ : Պետրոսի սիրա այժմ սառած է Աստուածա-  
յին սիրոյդ ջերմութենէն , Փրկիչ . միթէ զգալի  
կրակին ջերմութիւն պիտի տաքցնէ զայն :

Պետրոս ուրացած է զքեզ, և լկտի ընկերաց

հետ կը խօսակցի, արտաքուստ իբրեւ անծանօթ քեզ և անկարեկից, և ներքուստ խղճով խոցուած ու սրատվ խռոված ու տարակուսած։ Պետրոս նետահար թռչունի նման զարնուած է ուրացութեան երեք հարուածներով, և ինքնին իւր ինկած տեղէն կամդնելու զօրութիւն չունի, այլ բժշկարար ու փրկարար օգնութեան մը կը կարութիւն Պետրոսի վերջին ուրացութեան ձայնին հետ՝ հաւն ալ իւր ձայն կը հնչէ։ Հաւուն ձայն լիշեցնել կուտայ քու անսուտ գուշակութիւն Պետրոսին. «Մինչեւ հաւու խօսեալ իցէ, երից ուրացիս զիս։»

Այս ցաւալի անկման միջոցին սիրալիք ակնարկ մը կը գարձնես դէպ ի Պետրոս, ո՛վ սիրակեցոյց Տէր. և սիրոյ նայուածքովդ սիրոյ բաց կը ցոլացնես Պետրոսի սառուցած սրտին մէջ, որ անմիջապէս զօրութիւն կ'առնու, սաքի վրայ կը միանդնի, սիրոը կը խաղաղի, խիղճը կը հանկանդնի, սիրոը կը խաղաղի, խիղճը կը հանկանդնի, սիրով կը բորբոքի, գարսի, չողին Աստուածային սիրով կը բորբոքի, աշքերն արտասուած երկու աղբիւներ կը բղիւն զարաժողով ընկերներէն հեռանալ կ'աճապարէ, և առանձնանալով անդադար կուլայ և կ'արտասուէ իւր ակամայ կամօք ուրացութեան վրայ։ Հոգին մեղաց ալտաստուօք կը լուսայ իւր սիրոն ու հոգին մեղաց ալտաստութենէն, սիրոյ հրալ կ'ահոգին մոդին մոհամերձ հիւանդութենէն ու վէրքերէն։

Ահա Փրկիչ. այս է քու Աստուածային շնորհք

դարձող մեղաւորաց վրայ։ Այս՝ մեղսաքաւիչ Տէր. դու միշտ պատրաստ ես Պետրոսի վրայ ցոյց տուած մարդասիրական խնամքդ ու ողորմութիւնդ ցոյց տալ նաեւ ամէն մեղաւորաց վրայ. միայն թէ ամէն ոք Պետրոսի սիրան ունենալու են որպէս զի ընդունակ լինին Աստուածային շնորհացդ, և մեղաց թողութիւն գտնեն։

#### Ա. Վ. Օ Թ. Ք.

Ո՞վ ամենողորմ Տէր. անհամբեր անձիս համբերութեան շնորհքդ տուր, որ կարողանամ համբերել ինձ դէմ զրպարտութիւն խօսողներուն, ինչպէս դու ինձ համար համբերեցիր զրպարտիշներուդ։ Հեղութեանդ շնորհքը տուր ամբարաւանիս, որ կարողանամ սանձել մոլեկան բարկութիւնս, ո՛վ խոնարհասէր Յիսուս։ Սիրասառոյց սիրաս Աստուածային սիրովդ սիրավառէ, սիրաբժիշկ Տէր. որ կարողանամ մերժել հեշտախւառութեան թմբեցուցիչ սիրոյ հուրն, և Աստուածային սիրոյդ ընդունակ լինիմ։ Սրտիս խօնակ խիղճս մեղաց թմբութենէն զգաստացուր, Փրկիչ, որ կարենամ ունեցած պակասութիւններս ճանաչել, գործած մեղքերուս վրայ զղալ, ու ապագայ մեղքերէն զգուշանալ։ Մեղաց մըրրիկներէն յուղուած սիրս, միտքս ու հոգիս Աստուածային սիրոյդ ներշնչութեամբ խաղաղա-

ցուր . ո՞վ սիրախաղաղ Յիսուս Պետրոսի ունեցած յարատեւ զզման ու արտասուաց չնորհըդինձ ալ տուր . ո՞վ շնորհապարգեւ Տէր , որ լուանամ հոգիս մեղաց աղաեղութենէն : Քոյ Աստուածային չարչարանաց յիշատակաւ բժշկէ՝ զհոգիս մեղաց վէրքերէն , ինչպէս Պետրոսը բժշկեցիր ուրացութեան վէրքերէն , ո՞վ հոգեբուժ Տէր : Սիրաքաղց սիրտս ու հոգիս անբիծ սիրովդ յագեցուր , ո՞վ կերակրիչ տիեզերաց Յիսուս , որ Պետրոսի նման միշտ հետեւող լինիմ սուրբ պատուիրանացդ . ամէն :

—————  
ԽՈՐՀՈՂԱԾՈՒԹԻՒՆ ՎԵՅԵՐՈՐԴ

Յիսուս յատեանս Պիդառուի եւ Հերովդէսի

Առաւօտեան արեւին պայծառ ժամն է . բայց այժմ ոչ պայծառութիւն կը տեսնուի երկնքի երեսն , և ոչ զուարճալի տեսարան կ'երեւի երկրի վրայ , այլ սգաւորութեան երեւոյթ մը կը ներկայացուի այս օրուան մէջ : Ո՛հ , կ'երեւի թէ ներկայացուի այս օրուան մէջ : Ո՛հ , կ'երեւի թէ արեգակն ալ իմացած է , որ այսօր Արարիշդ երկարեգակն ալ իմացած է , որ այսօր Արարիշդ երկարեգակն ալ շարչարուիս , ու մեռնելու կրնի ու երկրի կը չարչարուիս , ու մեռնելու կրնի ու երկրի կը չարչարուիս . ո՞վ երանութիւն և բերկուպատրաստուիս . ո՞վ երանութիւն և բերկուպատրաստուիս :

Ահա կայիշափայ մեծ ժողով կաղմելով , խոր-

հուրդ կ'ընէ հրէից իշխաններուն , դպիրներուն ու Փարիսեցիներուն հետ , որ զբեղ Պիղատոսի ատեանը հանեն , ամէնքը միաբան և միաձայն վկայութիւն տան , որ գու օրինազանց ես Հրէից դէմ , և հակառակող ես Հռովմայ դէմ :

Այժմ Պիղատոսի առաջ կը ներկայացուիս , Փրկիչ . չարախօս ամբաստանիչներով շրջապատուած ես , սուտ վկաններով պաշարուած ես . ամէն բերան , ամէն լեզուն քեզ գատախաղ և չարախօս են : Բայց գու ո՞վ իմաստութիւն Հօր Յիսուս . ոչ կը պատասխանես , և ոչ ձայն կը հանես զրպարափիներուդ դէմ , այլ լուռ եւ անմռունչ կեցած ես անմեղ գառի նման :

Պիղատոս զարմանալով այսչափ համբերութեանդ վրայ , զբեղ իւր առանձնարանը կը կոչէ , ո՞վ լինկլդ կը հարցնէ . իսկ դու համառօս խօսքով մի կ'իմացնես գատառորին , որ երկնի և երկրի ստեղծող թագաւորն ես , և մարդու կերպարանք առած ես , ոչ թէ իշխաններու դէմ հակառակելու համար , այլ ընդհանուր մարդիկ ժողովուրդներով սատանայի գերութենէն աղատելու համար եկած ես : Դորա համար ոչ զօրք ունենալու կարօտ ես , և ոչ ալ զէնքի : Որովհետեւ քու զէնքդ՝ մարմինդ է . որով միայն կը պատերազմիս անմարմին հզօրին դէմ , մինչեւ մեռնիս , ու մեռնելովդ յաղթես աշխարհի իշխան սատանային , և նորա իշխանութեամբ գերեալ հոգիներն աղատելով հետոդ երկինքը տանիս , ուր Աս-

տուածութեամբ կը թագաւորես ամէն արարած-  
ներուն վրայ . « Իմ թագաւորութիւն չէ՝ յայսմ  
աշխարհէ : »

Պիղատոս անգիտակ լինելով ովք ըլլալուդ, մի-  
այն այսքան իմացականութիւն կունենայ, որ դու  
անիրաւ տեղ կամբաստանուիս հրեից ժողովրդէն  
լոկ նախանձէ առաջ եկած կրքի մը համար։ Պի-  
ղատոս փորձ մը կ'ընէ այս նախանձուտ սրանըը  
համոզելու, որ զուր տեղ է իրենց կատաղի ձայնն  
ու աղաղակը, զուր տեղ ամբաստանութիւններ  
ու շարախօսութիւններ կ'ընեն անմեղիդ վրայ,  
որ ոչ իրենց դէմ յանցանք մը դործած ես, և  
ոչ չուովմայ դէմ։

իսկ աստուածասպանք նորէն յուղուելով գա-  
տաւորին առաջ, գաղանաբար աղաղակներ կը  
բարձրացնեն, որ դու Գալիլեացի մը լինելով՝ բո-  
լոր Հրեից խռովութեան պատճառն եղած ես, և  
Հռովմայ դէմ՝ ալ հակառակ եւս եւ այս պատ-  
ճառաւ Պիղասոս Հերովդէսին կը զրկէ զքեզ,  
իւր օձիքը Հրեից ձեռքէն աղատելու համար:

Ահա Հերովդէսի ատեանը կը ներկայացուիս ,  
Փրկի՛չ . Հաղարաւոր չարախօններ գքեղ արձապա-  
տեր են , ոմանք բողոքներ ատլով վրադ , ոմանք  
վկայներ լինելով : Բայց ո՞վ կարող է ծամարիտ  
յանցանք մը վրադ գտնել . ո՞վ սրբութիւն ո՞րը-  
բոց Յիսուս . զի ահա Հերովդէս ալ գքեղ կը քըն-  
նազատէ , և ամենափոքր յանցանք մը վրադ չը-  
գտներ :

Հերովդէս քեզ վրայօք լսած հրաշագործութիւնները տեսնել կ'ուղէ, և դու լռելուզ համար իբրեւ յիմար և տգէտ անձ մը ծաղր ու կատակ կը լինիս ատեանին առաջ։ Արհամարհութ Հերովդէսին պատասխան չես տար, սրտագէտ Տէր. որովհետեւ նա ո՛չ թէ քեզ հաւատապու՝ այլ լոկ զբօսանքի մը համար հարցումներ կ'ընէ, և պատասխան չառնէր։ Վասն զի յաւելրդ կը համարիս պատուական մարդարիտներ անոր առաջ ձգել։ Եւ այս պատճառաւ Հերովդէս սպիտակ հանդերձ վրադ ձգելով Պիղատոսին զքեզ կը վերադարձնէ.

ՍՀա Պիղատոսի առաջ կը ներկայանաս, Տէր .  
ահա երկու թշնամիներ իրարու հետ հաշտու-  
թիւն կունենան, և քու պատճառաւ սերտ բա-  
րեկամներ կը լինին միմեանց . ո'վ խաղաղութիւն  
երկնաւորաց և երկրաւորաց Յիսուս, բայց դու  
երկուքի պաշտպանութենէն ևս զուրկ կը մնաս :

Թէպէտ Պիղասոս չանք կ'ընէ զքեղ ազատել  
Հրէից ձեռքերէն . թէպէտ նորա կինն ալ ազգա-  
րաբութիւն կ'ընէ , որ ձեռքերը չը շաղախէ ան-  
մեղ արիւնովիդ , սակայն զուր եւ անօգուտ կը  
մնան այս աշխատութիւնները . որովհետեւ աս-  
տուածասպանաց անիրաւ պահանջքն առաջ կ'եր-  
թայ : Զատկական տօնի առթիւ՝ աւազակ Բա-  
րաբրայն մահապարտ վճիռէն կ'աղասուի , և դու  
անարաւ Գառն Աստուծոյ մահուան կը դատա-  
պարտուիս :

ՈՇ, այժմ սաստկակսկիծ գանակոծութեան կը մատնուիս, ո՞վ Փրկիչ. որովհետեւ դատաւորի հրամանաւ՝ զինուորաց ձեռքը մատնուած ես. Հրէայք և Հեթանոսք ամէնքն ալ թշնամի գարձած են քեզ. և ո՞վ պիտի խնայէ կուսածին մարմնոյդ, որ աչքի նման փափուկ և զգայուն է: Ահա անողորմ զօրքերով շրջապատուած ես, Փրկիչ. դատաւորի հրապարակին մէջ զքեզ կը մերկացընեն. ձեռքերնին առած զանազան տանջանարաններ, բեռնահիւս գանիչներ ու ձաղիչներ ստէպ ստէպ կը հարուածեն, կը վիրաւորեն, կը խոցուեն բոլոր անդամներդ, ու արիւնլուայ կ'ընեն:

ՈՇ, ո՞րչափ սաստիկ ու անսանելի կոկիծ ունիս այդ կարկտի նման ընդունած հարուածներէն, զորս մարդկան սիրոյ համար կը կրես, ո՞վ բժիշկ հոգւոց Յիսուս: Ուրեմն այս է եղեր այն աղէտալի գանդատը, զոր Դաւիթ մարդարէն քու դիմաց խւր վրայօք խօսած է. « Զթիկունս իմ հարին մեղաւորք, ընդերկար արարին զանօրէնութիւնս խւրեանց: » Այս Փրկիչ. այս նախագուշակութիւն այն ատեն գրեց մարդարէն, երբ հոգւոյ աչօք զքեզ այս սարսուելի հարուածին ատկ արիւնլուայ եղած կ'երեւակայէր: Ինչպէս այժմ գաման մեղաւորներն զքեզ անինայ կը հարուածեն, և կ'երկարեն իրենց անօրէն խըստաբութիւնն ու անդմութիւնն, և երբէք խըստայել չեն գիտեր: Սակայն դու այսչափ անսանայել չեն գիտեր: Սակայն դու այսչափ անսանելի ցաւեր ու վէրքեր կրելով՝ ոչ հարկանողա-

ցըդ կը դիմագրես, ոչ աղաղակ ու ձայն կը հանես, այլ անձայն և անմռունչ լուռթեամբ իրքեաստատուն վէմ կը տոկաս, ու կը համբերես. ո՞վ սիրոյ զոհ Յիսուս:

Ա. Ա. Օ Թ. Ք.

Անպարագրելի Աստուած իմ Յիսուս. որ մարդասիրութեամբդ մարդ եղար, ու բանտերու ու կապանքներու մէջ պարագրուեցար, որպէս զի դժոխային անզերծ բանտէն ու կապանքէն աղատես մարդոց հոգիները: Զիս ալ աղատէ մեղացս բանտէն ու կապանքէն կապանքներուդ չնորհիւ, ո՞վ աղատիչ Յիսուս: Մարդոց հոգիք մեղաց ցաւերէն ու վէրքերէն բժշկելուդ համար ունեցած ցաւերուդ ու վէրքերուդ չնորհիւ՝ զիս ալ բժշկէ մեղացս ցաւերէն ու վէրքերէն. ո՞վ ողջացուցիչ վիրաց Յիսուս: Մարդոց հոգիք մեղաց գերութենէն աղատելուդ համար պահած լուռթեանդ չնորհիւ զիս ալ աղատէ մեղաց և սատանայի գերութենէն, ո՞վ գերեգարձ Յիսուս: Մարդոց համար թափած սուրբ արեանդ չնորհիւ՝ որբէ՛ ըզ-հոգիս մեղացս աղտեղութենէն, ո՞վ մեղսաքաւիչ Յիսուս: Մարդոց հոգիք յաւիտենական տանձանքէն աղատելուդ համար կրածդ չարչարանաց չնորհիւ՝ զիս ալ աղատէ սատանային այն աներեւոյթ թշնամւոյս հարուածներէն. ո՞վ Փրկիչ իմ Յիսուս. ամէն:

ԽՈՐՀՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՅԹՆԵՐՈՐԴ

Յիսուս փշովի պատկի

Ո՞վ թագաւորաց թագաւոր Յիսուս . լուսեցնէն հրեշտակներ սարսելով ու դողալով կը նային ահաւոր բարձրելոյդ վրայ , և մարդիկ քեզ իրեւ կոխան ոտից՝ անխնայաբար կ'անարդեն ու կը նախատեն : Հրեշտակներ երեսնին կը ծածկեն Աստուածութեանդ անպատմելի փառքերէն , իսկ մարդիկ դիմացդ կեցած հանդերձդ կը մերկացընեն վրայէդ , գլուխդ փշովք կը պսակեն և անտանելի տանջանքներով կը չարչարեն : Հրեշտակաց բազմութիւնք երկնքէն բիւր երկրպագութիւններ կը մատուցանեն ամենաստեղծ Տէրութեանդ . իսկ մարդիկ լոկ քարի մը վրայ քեզ նստեցուցած մերկ մարմնով՝ հին լաթ մը վրադ կը ձգեն , ջախջախուած եղէդի կաոր մը ձեռքդ կը ձգեն , լրբենի անամօթութեամբ նախատանաց կուտան , լրբենի անամօթութեամբ նախատանաց ծնրադրութիւն կ'ընեն դիմացդ , վրադ կը ծիծածնրադրութիւնները , գորա համար հեռացած են ներկայութենէդ . և ներկայ եղողներն ալ « Փոխանակ բարւոյ , չար կը հատուցանեն քեզ » ինչպէս տեսաւ ու նախագուշակեց Դաւիթ մարդարէն :

Ահա Քահանայապետներ , Դպիրներ , Փարիսեցիներ ու իշխաններ ականատես կը լինին այդ

թագաղբութեանդ հանդիսին , և այլ եւս չեն նախանձիր և չեն տրտմիր վրադ , մանաւանդ կ'ուրախանան և կը հրճուին : Որովհետեւ այժմ ոչ հրաշագործութիւն կը տեսնեն հրաշագործ ձեռքերէդ , ոչ հոգեզուարծ բարբառներ կը լսեն Աստուածային բերանէդ , և ոչ ովաննայի ձայներ կը լսեն հասարակ ժողովրդէն . այլ անարդանք անարդանաց վրայ , և նախատինք նախատանաց վրայ կը տրուին քեզ Պիղատոսի զինուորներու ձեռօք , և ամէն տեսնողներուն տաղտկութիւն ու զգուանք եղած ես :

Այժմ կայիտափայի և Աննայի իղձն ու փափաքը լցուած է , Փրկիչ . որովհետեւ Հրէից բոլոր ժողովուրդ իրենց կողմն ունին , և դու զրկուած ես ծանօթներէդ , զրկուած ես աշակերտներէդ և սիրելիներէդ : Մարդիկ մոռցած են քէնէ ընդունած ու վայելած անթիւ երախտիքներն ու բարերարութիւնները , գորա համար հեռացած են ներկայութենէդ . և ներկայ եղողներն ալ « Փոխանակ բարւոյ , չար կը հատուցանեն քեզ » ինչպէս տեսաւ ու նախագուշակեց Դաւիթ մարդարէն :

Ո՞վ իմաստութիւն Հօր Յիսուս . քու ամէն գործողութեանց մէջ մեծ խորհուրդ և իմաստութիւն կը պարունակուին . դու յայնժամ մեծ ու զարմանալի գործ կը գործես . երբ մարդոց առաջ երբեւ դատարկ ու անգործ կը կարծուիս :

Դու՝ որ անստուեր լցոյն ես . մերկ մարմնով

մերկ քարին վրայ նստիլ յանձն կ'առնուս, որպէս զի լուսեղէն փառքէդ մերկացած Աղամն ու Եւան վերստին իրենց փառացը հասցնես, և Աստուածային տեսութեանդ արժանացնես իրենց ծննդովք ու զաւակօք :

Փիխանակ ականազարդ թագին՝ փշեղէն պըսակ դլուխտ կ'ընդունիս, որպէս զի փշախոց վէրքերովդ մարդոց հոգիներն առողջացնես մեղաց փուշերէն ու խոցուածներէն. և պսակես Աստուածային անձաւելի փառօքդ : Նաեւ փշեղէն պըսակովդ յուշ կածես մարդոց, որ այս աշխարհի բոլոր փառքերն ու վայելչութիւններն իրր փուշ կը խոցոտեն մարդոց սրտերն ու հոգիները զանազան հոգմերով ու մտատանջութիւններով : Մերկութեանդ վրայ առած հին ու պատառատուն մի լաթով՝ յուշ կ'ածես մարդոց որ իրենց գանձն ու հարստութիւնն իրենց սեպհականութիւն չէ, որ օր մը պիտի թողուն, միայն մերկածածուկ պատանքով մը գերեզմանին մթութեան մէջ պիտի թաղուին :

Ճեռքդ առած ջախջախուած եղէդով կ'իմացընես իշխանաց, որ իրենց բոլոր զօրութիւնը միշտ քո ձեռքդէ : Դու այն բոնաւոր եղէդներ մեծ խնամնվ ճեռքիդ հովանաւորութեան ներքեւ կը պահպանես, մինչեւ կատարես արդարադատ վճիռդ իւրաքանչիւր գործոց համեմատ, ինչպէս նախատեսած է Եսայի մարդարէն :

Դու զմարդիկ մեղաց գերութենէն ազատե-

լուդ համար՝ զազիր մարդոց զզուելի թուքն ու ապտակներ կ'ընդունիս Աստուածային երեսներուդ : Որով կ'իմացնես, որ փափկասէր մարդիկ երբ երեսնին կ'օծեն անուշահոտ իւղերով մեղսագործութեան գործիք ընելու նպատակաւ, այն ատեն թո՛ղ հաւատան, որ սատանայէն անարգանց թուք ու ապտակներ ընդունած կը լինին :

Դու փոխանակ արքայական գահին վրայ բազմելու, մի լոկ քարի վրայ կը նստիս, ո՞վ անըստուեր լուսեղէն աթոռ բազմով Յիսուս: Ասով ալ աշխարհիս ագահներուն իմացնել կ'ուզես, որ իրենց մեռնելէն վերջ այդ քարի նման քարով մը պիտի ծածկուին գերեզմանի անլոյս մթութեան մէջ, և միայն այն շիրիմը պիտի մնայ իրենց բաժին :

### Ա. Վ. Օ Թ. Ք

Ա. մենազօ՞ր Տէր . տակաւին պիտի շարունակե՞ս անտանելի չարչարանքներդ կրել չնշին մարդկութեան համար . տակաւին պիտի կրե՞ս նոր նոր անարգանքներ ու տանջանքներ կրածներուդ վրայ : Ա. յո՛ , փրկութիւն և կեանք Յիսուսու . որովհետեւ ամէն մասամբ անչափ և անսահման ես : Մարդասիրութեամբ անչափ ես, համբերութեամբ ալ անսահման ես : Մեծ է շարչանքներուդ ու ժուժկալութեանդ ասպարէզը .

վասն զի մեծ ու անհուն է այն սէրը , որ գիւրութիւն կուտայ քեզ անձանձիր չարչարութիւնարմնով՝ որ ամէն մարմիններէ զգայուն է . ո՛վ անբաւելի Աստուած իմ Յիսուս :

Դու զիս սիրելուդ համար ինձ վիշտ ու նեղութիւն զրկած ես , ես զանոնք չընդունելովս պարտազանցութիւն ըրած եմ երախտիքներուդ դէմ , օրինազանց գտնուած եմ պատուիրանացդ դէմ , ապերախտ եղած եմ սիրոյդ դէմ , և պարդիւն՝ փրկութեանս դէմ :

Ահա երեսանկեալ կ'աղաչեմ , անյիշաչար Տէր , փշեայ պսակիր վէրքերով հոգւոյս վէրքերուն բըժկութիւն տուր : Սներեւոյթ թշնամւոյս հարուածներուն տակ հեծող հոգւոյս՝ բժշկութիւն տուր , ո՛վ հոգերուժ Տէր : Մեղաց աղտեղութեան մէջ շաղախուած հոգիս՝ ընդունածդ թըքով մաքրէ' , ո՛վ սրբութիւն հոգւոց Յիսուս : Մեղօք ջախջախուած բանաւոր եղէդ հոգիս՝ սիրախընամ ձեռքիդ հովանաւորութեամբ պահէ' յուսահատութեան խորտակումէն . ո՛վ պատսպարան յուսացելոց Տէր : Երկայննտութեանդ չնորհիւներէ' գործած յանցանքներուս , և նոր սիրտ տուր ինձ , որպէս զի այսուհետեւ բոլորովին զիս քեզ նուիրեմ և սիրայօժար կամօքս քեզ ծառայեմ : Աստուածային սուրբ սիրովդ վառէ' սիրտս ու հոգիս , սիրագթա՛ծ Տէր . որպէս զի միշտ ըզքեզ մտածեմ . տիրած սիրտս՝ չարչարանացդ սուրբ յիշատակաւ միմիթարեմ . սուրբ սիրոյդ յի-

շողութեամբ սիրաքաղց հոգիս կերակրեմ , ու խաղաղութեանդ մէջ խիղճս անդորրացնեմ . ամէն :

ԽՈՐՀՈՒԱԾՈՒԹԻՒՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Յիսուսի խաչելութեան ու մահուան վճիռն

Ո՛վ ամենակալ Աստուած . Տէ՛ր կենաց և մահու Յիսուս . որ հրեշտակաց ու մարդոց սրբութիւն և արդարութիւն գոլով՝ այժմ անմենամեղաւազակի մը տեղ մահապարտ մը կը լինիս , և աւազակներուն հետ խաչտիլ ու մեռնիլ յանձն կ'առնուս : Սնաղորմ ու անխեղն մարդոց ձեռօք կը չարչարուիս . ուստի ոչ խնայել գիտեն , և ոչ ալ գութ ու խնամ ունին : Քու վրադ քիչ մը գըթացող՝ միայն Պիղատոսն էր , և ահա նա եւս խստացած է վրադ իր երկչոս ու ագահ բնաւորութեան համար :

Պիղատոս թէեւ վերջին փորձ մի եւս կընէ զքեզ արձակելու համար բայց կատաղի աստուածապանք նորէն երկիւզ կը ձգեն նորա երկչոս սիրտն . որ եթէ զքեզ արձակէ , այն ատեն չուովմայ բարեկամութենէն զրկուած պիտի լինի :

Պիղատոս զքեզ արիւնլուայ փիճակին հասուցած՝ Հրէից կը ներկայացնէ . « Ահա՝ այլդ ցձեզ . » թերեւս համոզուին իրեն , և գութ ածեն ողոր-

մելի վէրքերուդ, ու արձակեն զքեզ։ Բայց նոռքա փոխանակ զիջում ընելու, աւելի կատաղի ձայներ ու աղաղակներ կը հանեն, որ մահապարտ Բարաբրան աղատուի, և գու անպարտդ կրես նորա չարագործութեան պատիժը։ « Բա՛րձ զդա, և արձակեա՛ մեզ զբարաբրայ։ »

Պիղատոս իւր ներքին խիղճն ու հոգին անջրն- շելի աղտեղութեամբ կ'ապականէ. և արտարին աղտը մաքրող ջուրը կը խնդրէ ձեռքերը լուալու համար. և լուացուելէն վերջ՝ « Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. » լսելով հրաման կը հանէ, որ չարագործ աւաղակն արձակ թողուն, և զքեզ միւս աւաղակաց հետ պատժակից ընեն։ Այս՝ աղատարա՛ր Տէր. դու իրեւ աւաղակ կը դատապարտուիս աւաղակներու հետ, որպէս զի մեղապարտ մարդիկն աղատես իրենց դատապարտութենէն ու յաւ իտենական մահէն։

Պիղատոսի զինուորներն ու չրէաները դատապարտութեան խաչդ կը պատրաստեն, Փրկի՛չ, եւ Պիղատոս յանցանքդ կ'արձանագրէ խաչիդ վրայ։ Ի՞նչ է քու յանցանքն, ո՛վ մեղսաքաւիչ Տէր. աւաղակութի՛ւն ըրած ես, որ աւաղակաց հետ պատժակից կը լինիս. աւաղակներ իրենց չարագործութեան համար կը պատժուին, բայց դու տիեզերաց արարիչ և թագաւոր լինելո՞ւդ համար աւաղակներու հետ կը պատժուիս. մարդարէից նախագուշակաց չրէից Մեսիան ըլլալնո՞ւդ համար կը պատժուիս։ Այս է եղեր քու յան-

ցանքն, ո՛վ փրկութիւն և կեանք Յիսուս, ինչպէս յայտնի է Պիղատոսի գրածէն. « Յիսուս նազարեցի թագաւոր չրէից։ » Զոր նախանձարեկ հրէայք իրենց ուղածին պէս փոխել պալ կ'ուղեն, և փոխելն անհնարին կը լինի. զի դու ինքդ ես ճշմարիտ Մեսիայն և չրէից թագաւորը, որ մարդկան փրկութեան համար կը դատապարտուիս.

Ահա Պիղատոսի պաշտպանութենէն թողուելով՝ չրէից ձեռքն յանձնուած ես, Փրկի՛չ. այնուհետեւ ի՞նչ տեսակ չարչարանք ու նախատինք պակաս պիտի թողուն այդ մարդագայլերն։ Որոնք վիրալից ուսերուդ վրայ մի ծանր խաչափայտ դրած՝ Պիղատոսի պալատէն դէպի Գողդոթա զքեզ կը տանին ստէպ ստէպ հարուածներով ու տանջելով։

Ո՞հ, քու կրած խաչին ծանրութիւնն անտանելի է, զոր վիրալից ուսերուդ վրայ կը կրես, Փրկի՛չ. ծանրութիւն մը, որ ընդհանուր մարդոց մեղաց ծանրութեան չափն ու կշռն է։ Ահա այդ ծանրութեան տակն անտանելի ցաւերով ու վըշտերով կը տագնապիս, ու յաճախ յաճախ երեսացդ վրայ գետինը կ'իյնաս։ Ոնդութ դահիճներով շրջապատուած ես. ոմանք Աստուածային երեսներուդ թուք ու ապառակ կը տան. ոմանք անէծք ու հայհայութիւն կ'ընեն։ Ո՞հ, թէ ո՞րքան ցաւակցելու եւ կարեկցելու մի տեսարան դարձած ես, սիրագո՞ւթ Յիսուս. և ո՞րքան կարծրասիրտ ու անողորմ մարդոց մատնուած ես, որ

Հարուած հարուածի վրայ կրելով ուժասպառ կը լինիս ու գետնին վրայ կը տարածուիս։ Եւ քարասիրտ դահիճներդ՝ փոխանակ վրադ դթալու՝ յաճախ հարուածներ կ'իջեցնեն փշապատ դլիսիդ վրայ, որ ամէն տանջանքներէն ցաւալին ու կը կըծալին է։ Եւ դու այդ անտանելի ցաւերուդ մէջ չարչարուելով, ելնելով ու ինկնալով ճանապարհ՝ կը շարունակես. ինկածդ տեղէն կ'ենես ոտիցդ վրայ, և նորէն գետինը կ'իյնաս։ Թէպէտ մի քանի վայրկեան Սիմոն կիւրենացին կը վերցնէ խաչդ, բայց դու նորէն զայն թալկացած ուսերուդ վրայ կ'ընդունիս. ինկնալով ելնալով արեան քրտնքիդ մէջ կ'ողողուիս. ո՛վ սիրոյ զոհ Յիսուս։

Այս տագնապալից ատեն ահա մի խումբ լացող կիներ ետեւէդ կուգան, որոնք փոխանակ իրենց անձանց ու զաւակաց վրայ լալու, քու վըրադ կուլան ու կ'ողբան։ Դու դէպի անոնց դառնալով յուշ կ'ածես, որ այնպիսի լացն ու ողբ քեզ վրայ ընել անօգուտ է, այլ իրենց անձանց և զաւակաց վրայ լալու են, որք բիւր թշուառութեամբ լի են։ Որովհետեւ երբ դու նոցաթշուառութեան վրայ կ'արտասուէիր, նոքա անզգայ կը կենային իրենց անզղութեան և անդարձութեան մէջ։

Որտագէ՛տ Տէր. կ'երեւի թէ այդ լացողներու ողբն ու արտասուք անախորժ են քեզ. որովհետեւ իրեւ լոկ մարդ մը կը նկատեն զքեզ, որպէս թէ ակամայ ինկած ես չարչարողներուդ

ձեռքն. և անկարող ես նոցա ձեռքէն ազատուիլ։ Բայց դու իրենց վրայ գալիք թշուառութիւններն յիշելով՝ չեղածն իրեւ եղած կը դուշակես, որովք կ'իմացնես, որ այդ չարչարուող մարմնոյդ մէջ Աստուածային զօրութիւն մը կը կրես։

Ահա թալկացածդ ատեն դահիճներդ թմրեցուցիչ գինի կուտան քեզ, զոր յետա կը մերժես. որպէս զի լրջութեամբ կրես անտանելի ցաւերդ ու տանջանքներդ մինչեւ վերջին շունչդ։

Ահա մի սիրահամեստ փոքր խումբ կիներու կը հանդպիս, սիրագթա՛ծ Տէր։ Ո՛հ, ոոքա զքեզ պաշտող ու սիրող ազախիններդ են, որք միշտ հաւատարմութեամբ ու որբութեամբ ծառայած են քեզ իրենց բոլոր սրաւով, հոգւով ու ստացուածքներով։ Սոքա քեզ համար լաց ու կոծ կ'ընեն, աղիողորմ կը հառաջեն և կ'արտասուեն։ Նոցա քեզ վրայ ունեցած կատարեալ հաւատք, հաստատուն յօյս և սուրբ սէր արդէն գիտես ու կը ճանաչես, ո՞վ սրտագէտ Տէր։ Կը ցաւին քեզ համար ու կը գորովին վրադ, որ անմեղութեամբ կը մեռնիս իրեւ մահապարտ. որ մարդոց սիրոյ համար կը չարչարուիս, և մարդիկ զքեզ կ'ատեն, և չարագործ աւաղակներուն պատժակից ընելով կը մեռցնեն։ Ուստի դոցա լացն ու արտասուք հաճելի և ընդունելի են քեզ, ո՞վ վարձատրիչ բարեգործաց Յիսուս։

Ահա այս սուրբ խումբին մէջ մի ամենասիրելի և գորովալի Մայր ունիս, Մայր՝ որոյ քեզ վրայ

ունեցած սէրն ու մայրական գութ գերազանց է մարդու մտքէն ու հանձարէն, և քեզ միայն գիտելի է։ Մայր՝ որոյ սրտի կրած ցաւն ու կակիծը քու կրած ցաւոյ հաւասարակշխոն է։ Ո՛հ, խիստ անտանելի է այս մօր ունեցած ցաւն ու վիշտ քեզ վրայ, ո՛վ վշտաչարչար թիսուս վասն զի նա երբ գքեղ իւր արգանդին ու ծոցին մէջ կրեց, անձառելի եղաւ նորա սրտի և հոգւոյ ուրախութիւնն ու հրճուանքը։ Իսկ այժմ երբ գլուխդ փշալից կը տեսնէ, երեսներդ թքամած ու գունաթափ, ու բոլոր մարմինդ վէրքերավ լցուած ու արիւնլուալ եղած, սորա համար աննկարագրելի է նորա սրտի ցաւն ու կսկիծը։ Ո՛հ, ո՞րքան սաստիկ ու անտանելի ցաւ ու վիշտ կը պատճառէք միմեանց իրարու տեսութեամբ։ ո՛վ մարմնով վիրալից Աստուածորդի, և սրտով ու հոգւով ցաւակից Աստուածամյոր։

---

Ա. Զ. Օ Թ. Փ.

Ո՞վ երկայնամիտ Աստուած իմ Յիշէ այն անտանելի չարչարանքներդ ու ցաւերդ, զորըս ինձ համար կրեցիր, և բժշկէ զիս մեղացս վէրքերէն։ Յիշէ, ո՞վ գթառատ Տէր։ այն յաճախ թալիանալդ ու գետինն ինկնալդ։ յիշէ այն ատեն կրածդ հարուածներն ու անարդանքները։ և սուր կարողութիւն ուժասպառ սրտիս, որ կա-

րողանամ կանգնիլ մեղաց մէջ ինկած տիղմէն։ Յիշէ փշապատ գլխոյդ վրայ ընդունած հարուածներդ, ո՞վ Փրկիչ։ և անոնցմնվ ներէ տիար բընութեանս, և կանգնէ զիս մեղաց մէջ յաճախ անկումներէս։ Յիշէ, ամենափառաւո՞ր Տէր, ինձ համար կրածդ զագիր թուքն ու ապահեներն, որսվք այլագունեցան ու տգեղացան Աստուածային երեսներդ, և անոնցմնվ սրբէ զհոգիս մեղաց ագեղալից զագրութենէն։ Յիշէ, ո՞վ անյաղթելի զօրութիւն, Աստուած իմ Յիսուս, այն ընդունածդ կապանքներն, և արձակէ զիս մեղաց կապերէն, և կապէ սուրբ երկիւղիդ զղթայով, որ մարմնոյս հաճոյքներուն չհետեւիմ, և քենէ չբաժնուիմ ու չհեռանամ։ Տուր ինձ խղճի արթնութիւն, ո՞վ Տէր։ որ Պիղատոսի նման երկչուառութեան թմրագեղով չմեռցնեմ հոգիս։ Քո ամենասուրբ մօրդ և հաւատարիմ սուրբ աղախիններուդ սուրբ արտասուաց քաղցր ճաշակով միխթարէ ախրալից հոգիս, չնորհապարզեւ Տէր։ որ կրած ցաւոցդ ցաւակից լինիմ, որպէս զի ցաւերուդ յիշատակաւ աղատուիմ յաւիտենական կորուստէն։ Ամենօրհնեալ ծնող մօրդ բարեխօսութեամբ զիս միշտ խաղաղութեանդ մէջ պահէ, խաղարա՞ր Տէր, որպէս զի սուրբ սիրով ծառայեմ գքեղ։ և անխար յուսով ապրիմ ու մեռնիմ փրկութեանս վիճակին մէջ ամէն։

▶▶▶▶▶◀◀◀◀◀

ԽՈՐՀԻՇՈՒԹԻՒՆ ԽԵՆԵՐՈՐԴ

Յիսուսի խաչելութիւնն

Ահա կէսօրեայ ժամն է Փրկիչ, և դու երկու չարագործներով դէպի Գողգոթային գլուխը կ'ել-նես, և հոն հանգիստ կ'առնուս։ Ո՛հ, հանգիստ, որ մահուան ցաւոց ու անտանելի տանջանաց նորոգութիւնն է։ Բարձեալ Տէր, ո՞րքան յետին անարգութեան հասած ես, որ չարագործ աւազակներու հետ ընկերակից լինելով, նոցա հետ խաչակից ու մահակից կը լինիս։

Ահա մեղաւոր մարդիկ զքեզ մահապարտ աւազակաց հետ կը խաչեն, երկայնամբ' ու Տէր. որովհետեւ նախանձորդ թշնամիներդ զքեզ պարտէզին մէջ բռնելու ատեն լսած էին քենէ այս սրտածմիկ գանգատը. «Իբրեւ ի վերայ աւազակի ելիք սուսերօք և բրօք ունել զիս.» սորա համար մեծ ոխ պահեցին. մինչեւ զքեզ այդ անարգ մահապարտաց հետ պատժակից ըրին։ Այս, ամենագթած Տէր, պատժակից կը լինիս պատժապարտներուն, որպէս զի աղատես զմարդիկ իրենց մեղաց պատիժներէն, ինչպէս նախագուշակած է Եսայի մարդարէն։ «Նա վիրաւորեցաւ վասն մեղաց անօրէնութեանց։»

Ահա խաչիդ վրայ տարածուած ես, Փրկիչ. անողորմ գահիձներովդ շրջապատուած ես. ոմանք ձեռքերդ, ոմանք ոտքերդ խաչին վրայ կը բեւե-

ռեն, կարկտի նման կուանի հարուածներ կ'իջեցնեն բեւեռներուդ վրայ։ Արդե՛օք ցաւալից մայրդ ալ ներկայ է այդ ցաւալի տեսարաննիդ, ով սիրոյ զոհ Յիսուս։ Այս, նա ականատես և ականջալուր է ամէն կուանահարութեանց, որոնք մի մի սուր սլաքներ լինելով՝ նորա մայրենի սըրտին մէջ կը շարուին, ինչպէս նախագուշակեց Սիմոն սուրբ ծերունին. «Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր։» Այս, Փրկիչ. սիրագործ մայրդ ալ քեզ հետ կը խոցուի բեւեռներուդ ցաւերով ու կոկիծներով. որովհետեւ նա Եւայի ցաւերուն պարտավճար մայրն է, ինչպէս որ դու ինքդ Ադամայ եղած ես։

Արդե՛օք այս դառնակսկիծ ցաւոց մէջ պաշարուած սրտամորմոք մայրդ ալ ուրիշ մայրերու նման տարօրինակ ձայներ ու աղաղակներ կը հանէ, կամ տարօրինակ շարժումներ կ'ընէ։ Ո՛չ, ո՛չ, խոնարհասէր Տէր, ես այսպէս կը հաւատամ, որ նա քու կրած ամէն վշտաց ու ցաւոց հաւասար՝ վիշտեր ու ցաւեր ունի. և ինչպէս դու առանց ձայն հանելու անմռունչ կեցած ես անտանելի ցաւերուդ մէջ, այնպէս ալ սիրագոհ մայրդ քու օրինակիդ կը հետեւի։ Դա քու բեւեռներուդ ցաւն ու կոկիծը իւր սրտին մէջ կը կրէ. դա աղբիւրի նման արտասուզ կը թափէ աշքերէն քու ներկայութեամբ, այլ մեղմ ու հեղիկ շարժումով անմռունչ կը հեծէ ու կը հառաչէ, կ'ողբայ և անդադար կ'արտասուէ։ Դու քու

վշտաց վշտակից, քու ցաւոց ցաւակից, քու համբարութեանդ հետեւող, քու լրակացութեանդ նմանող, քու սիրազո՞հութեանդ կցորդակից, քու սիրոյդ սիրակից լինելով քեզ հետ կը զոհուի և կ'ողջակիլուի ի հոսոտելիս երկնաւոր Հօր Աստուծոյ:

Սիրազո՞հ Տէր, այժմ խաչիդ վրայ բեւեռներէդ կախուած ես: Ո՞հ, ո՞րչափ սաստիկ ու անտանելի է բեւեռներուդ ցաւը միւս ցաւերէն. որովհետեւ ամբողջ մարմնոյդ ծանրութիւն բեւեռներէդ կախուած է: Եթէ ձեռքերդ թուլցընես, ոտքերուդ ցաւը կը կրկնապատկի, նոյնպէն եթէ ոտքերդ թուլցնես, ձեռքերուդ ցաւը կը կրկնապատկի: Եւ այս անտանելի ցաւերուդ մէջ տապելով ու տանջուելով ծարաւն զքեզ յոյժ կը նեղէ. « Ծարաւի եմ, » կը գոչես, ջուր կը խընդուղիք պիտի տայ քեզ ջուր, ո՞վ ծարարես: Բայց ո՞վ պիտի տայ քեզ ջուր, ո՞վ ծարաւելոց սիրոյ աղբիւր Յիսուս: Որովհետեւ բարեւ կամներդ հեռացած են, աշակերտներդ ցիլ ու ցան եղած են. մէկն զքեզ մատնելով, միւսն ու րանալով, և մէկաները մէկ մէկ մութ խորշերու և անկիւններու մէջ ծածկուած ու անյայտացած են: Եւ անոնցմէ ո՞վ պիտի միտք բերէ, որ դու խաչին վրայ մահուան ցաւ ու երկունք կը կրես, սաստիկ ցաւակրութենէդ լեզուդ չորցած է. սաստիկ ցաւակրութենէդ լեզուդ չորցած է.

քեզ կը խնայեն տալ, ո՞վ ծարաւելոց կենաց ջուր պարգեւող Յիսուս.

Ո.յո՛, Տէր. ունիս թէեւ ներկայ ու ցաւակից քեզ մի ցաւալի մայր, որ ծարաւի բարբառդ լըսելով՝ խաչիդ պատուանդանին վրայ ուժաթափ կը լինի, և չունի կարողութիւն ուզածդ ջուր բերել ու քեզ տալ իւր մայրական գթով ու գործավալի ձեռօք: Նոյնպէս ունիս ներկայ մի հաւատարիմ ու սիրելի աշակերտ, որ թէպէտ նա ևս սիրոյդ համար կը գորովի ու կ'աղէկիդի մշտահոս արտասուօք. սակայն ի՞նչ կարելի բան է, որ նա համարձակի ջուր բերել քեզ, անթիւ մարդագայլ-ներէն շրջապատ լինելով: Քեզ ի՞նչ որ ընելու են, անգութ դահիճներդ պիտի ընեն, Փրկիչ. և ի՞նչ որ Դաւիթ մարդարէն հաղարաւոր տարիներէ առաջ նախագուշակած է քեզ համար, այժմ զայն կուտան քեզ. « Ետուն ի կերակուր ինձ լեզի, և ի ծարաւ իմ արքեցուցին ինձ քացախ: » Ահա այս քացախն ու լեզին կ'ընդունիս, ու կը ճաշակես չարչացողներուդ ձեռքով, գու որ ջուրը գինի գարձնող Յիսուսն ես, այժմ լեզիախառն քացախ կ'ընպես, և իրենց գառն ու զզուելի համը չես քաղցրացնէր, ոչակէս զի այդ լեզի ըմպելիով մարդոց հոգիք բժշկես մեղաց գառնութենէն: Քու ծարաւդ միայն ջրոյ ծարաւ չէ, ո՞վ սիրոյ աղբիւր Յիսուս. այլ աւելի սիրոյ ծարաւ է: Եւ ահա այս սիրոյ ծարաւով չարչարանացդ բաժակին ըմպեցիր, որոյ վերջին մրտւն այս լեզին ու քացախն եղան:

Տակաւին նախանձաբեկ աստուածասպանք շարունակ կ'անարգեն, կը հայհոյեն ու կ'անիշաբառանեն զքեղ, ո'վ երկայնամիտ Տէր։ Այս մարդոց նախանձն ու ատելութիւնը յագուրդ չունի, իսկ քու երկայնմութիւն չափ ու սահման չունի։ Հրէայք՝ որ շատ անդամ լրած ու տեսած են Աստուածային հրաշագործութիւններդ, ու քեզ չեն հաւատացած, այժմ ինքնին խաչէդ վար իջնելդ տեսնել կ'ուզեն. և անով կը խոստանան հաւատալ Որդի Աստուծոյ ըլլալուդ։ Իսկ գու որ հոգիդ խաչին վրայ պիտի աւանդես, ո'չ թէ խաչէն վար իջնալով Աստուածութիւնդ կը յայտնես, այժմ անբան արարածներով կը յայտնես, որ մահւանդ սգակից կը լինին։

Ահա երկինք ու երկիր վկայութիւն կուտան, որ գու արարիչ Աստուած և Աստուծոյ Որդին ես, որ այժմ խաչին վրայ պիտի մեռնիս։ Ահա արեն լուսին երկնից երեսը կը մթացնեն, խաչին վըու երայ մերկութիւնդ ծածկելու համար։ Երկրի երես սեւ սուգ կը հագնի, մօտակայ մահուանդ համար։ Ապառաժ քարեր ու վէմեր ահաբեկ շարժումներ ու ահագին ձայներ հանելով կը պայթին, Աստուածային զօրութենէդ սարսելնուն թին, Աստուածային զօրութենէդ սարսելնուն համար։ Գերեզմանները կը բացուին, իրենց մէջի համար։ Գերեզմանները կը բացուին, առաջնապը կը կրես, բայց չես մոռցած ցաւի մայրդ, որ արինաշաղախ խաչիդ գրկախառնելով աղբիւրի նման արտասուք կը թափէ խաչիդ վրայ, և այդ արտասուքն արիւնիդ հետ

հարիւրապետն՝ որ չարչարողներէդ մին է, ահա բարձրաձայն կ'աղաղակէ։ « Արդարեւ այրս այս Որդի Աստուծոյ էր։ » Այս ամէն Արարածներ կը վկայեն, որ գու ես Աստուած և Աստուածորդին։ այլ ևս ի՞նչ վկայութիւն կ'ուզեն անհաւատ Հըրէայք, որ հաւատան քեզ, ո'վ ամիեզերք ստեղծող Յիսուս։ Որ տակաւին այդ կարծրասիրա մարդոց վրայ գութ կ'ածես, և նոցա համար գթաւատ Հօրդ ներողութիւն կը ինսդրես։ « Հայր, թող գոցա, զի ո՛չ գիտեն զինչ գործեն։ »

Այս սիրակեցոյց խօսքովդ աջակողմ աւագակին խաւար մոտաց լցոս կը ցոլացնես, որ զքեղ արդար ու անմեղ կը ճանաչէ, ճշմարիտ Աստուած և տիեզերաց գատաւոր ըլլալովդ կը հեռաւաեսէ և կը խոստովանի։ նաեւ իւր բազմամեղ անձը փրկելուդ յուսով հետեւեալ խօսքը քեզ կ'ուզելէ։ « Յիշեա՛ զիս Տէր, յորժամ դաս արքայութեամբ քով։ » Այս խնդիրով նա ոչ միայն իւր մեղաց թողութիւն կը գտնէ, այլ և կ'արժանանայ այս փրկարար աւետարուր ձայնդ լոելու։ « Ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին։ » Ահա այս է քու ձրիատաւր շնորհքդ ամէն զղջացող մեղաւորաց համար, ո'վ մեղսաբաւիչ Յիսուս։

Ամենախնամ Տէր, անտանելի ցաւերով մահուան ատագնապը կը կրես, բայց չես մոռցած ցաւի մայրդ, որ արինաշաղախ խաչիդ գրկախառնելով աղբիւրի նման արտասուք կը թափէ խաչիդ վրայ, և այդ արտասուքն արիւնիդ հետ

խառնուելով Գողգոթայի հողերը կ'ողողեն, եւ  
մինչեւ Նախահօր ոսկորները կը թափանցեն։ Զես  
մոռցած մայր մը, որ քու ցաւերը կրելով հոգե-  
ւոր ծննդական երկունքի մէջ է, որով ի կեանս  
պիտի ծնի Եւայէն ի մահ ծնեալ շատ որդիքները,  
որոց առաջին ու անդրանիկ որդին՝ սիրելի աշա-  
կերտ Յովհաննէս կը լինի, զոր սիրելի մօրդ-  
կ'որդեգրես ըսելով՝ «Ահա՝ որդիքու» նոյնպէս  
գորովալի մայրդ Յովհաննէսին կը յանձնես ըսե-  
լով՝ «Ահա՝ մայր քու» Սիրելիով զսիրելին կը  
միսիթարես, սիրելի ու հաւասարիմ աշակերտող՝  
սիրելի մօրդ որդեգիր կ'ընես, սիրագորով մայրդ՝  
սիրամաքուր Յովհաննէսին մայր կ'անուանես, խո-  
նարհասէր մօրդ՝ հնազանդ աշակերտ սպասա-  
ւոր կը կացուցանես, ով ծնողասէր Յիսուս։

Ա. Դ. Թ. Ք.

ՈՎ Փրկարար զո՞հ Յիսուս, բեւեռամած ձե-  
ռացդ և ոտիցդ կրած կոկծալի ցաւոց համար  
բժշկէ՛ զհոգիս հեշտախտութեան մահացու վեր-  
քերէն ու ցաւերէն։ Սիրատարած բազուկներուդ  
հովանաւորութեան կը դիմեմ, ով Փրկարար Տէր,  
Փրկէ՛ զիս աներեւոյթ թշնամւոյս բռնութենէն։  
Կենարար արիւնովիդ ներկուած խաչիդ պատուան-  
դանին կ'ապաւինիմ, ամենազօ՞ր Տէր, զօրութիւն  
տուր տկար հոգւոյս՝ յաղթել երեք թշնամինե-

րուս, սատանայի, աշխարհի և մարմնոյս Ներէ  
անթիւ յանցանքներուս, մեղսաքաւի՛չ Տէր, ինչ-  
պէս ներեցիր աշակողմ աւազակին։ Մեղօք դառ-  
նացած հոգիս՝ ճաշակածդ լեզիով քաղցրացո՞ւր,  
սիրագո՞ւթ Տէր։ Զեռացդ ու ոտիցդ բեւեռնե-  
րով ամրապնդէ՛ զհոգիս սուրբ սիրոյդ հետ, սի-  
րակեցո՞յց Տէր։ Ամենամաքուր ծնող մօրդ որդե-  
գութեան և մայրական սուրբ գգուանաց ու խը-  
նամոց յանձնէ զիս, սիրախնամ Տէր։ Նորա սուրբ  
սիրոյ ճաշակին արժանացո՞ւր սիրագաղցր հոգիս,  
սիրաշնո՞րհ Տէր։ Սիրասուն աշակերափդ խոնար-  
հութեան ու հնազանդութեան շնորհքը պարգե-  
ւէ՛ ինձ, շնորհապարգե՞ւ Տէր։ Որպէս զի մաքուր  
խղճով, սուրբ սիրափ և խոնարհ հոգւով ու որ-  
դիական սիրով ծառայեմ ամենաօրհնեալ ծնող  
Մօրդ։ Եւ նորա մայրական հովանաւորութեամբ  
հոգիս քեզ աւանդեմ. ամէն։

ԽՈՐՀՈՒԾՈՒԹԻՒՆ ՏԱՄԵՐՈՐԴ

Յիսուսի մահն եւ քաղումն

Փրկարար չարչարանացդ չափն ու սահման  
լըացաւ, Փրկի՛չ զի «Ամենայն ինչ կատարեալ է» ։  
Այժմ հոգիդ աւանդման կէտին սպասելով այս  
սրտառուչ խօսքդ կ'ուղղես առ գթառատ Հայ-

լրդ. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս: »

Ի՞նչ է այս գորովագութ խօսքիդ պատճառն՝ ովանքաժանելի էութիւն Հօր Յիսուս. միթէ թողուած ես երկնաւոր Հօրէդ, որուն գանդատ կ'ընես իբրեւ թողեալ ու լրեալ: Ես այսպէս կը հաւատամ, որ քեզ համար չէ այս գանդատ, այլ սիրելի մօրդ համարն է, գթառաշատ Տէր: Արով հետեւ մահդ սիրագորավ մօր ցաւելը պիտի կըրենապատկէ, և պիտի տեւէ մինչեւ յարութիւն առածդ ատեն: Դորա համար կ'ուզես ժամ առաջ հոգիդ Հօր ծոցն աւանդես, որպէս զի ժամ յառաջ յարութիւն առնես և Աստուածային փառօք ամենասիրելի մօրդ երեւնաս, ու մսիթարես այն սիրար, որ քու բոլոր կրած ցաւն ու վիշտը իւր մէջ կը կրէ:

Երկնաւոր Հայրդ արդէն լսած է այս խօսքդ, և պիտի կատարէ մարդկային խոնարհարար խընդիրքդ, Փրկիչ: Սորա համար այս գորովալի ազագակդ ալ կը բարձրացնես առ բարձեալ Հայրդ. «Հայր՝ իձեռու քո աւանդեմ զհոգի իմ: » Եւ այս խօսքիդ հետ հոգիդ կուտաս Հօրդ, և կը լուխտ գէպի գորովագութ մայր կը խոնարհեցընես առանց խօսելու և առանց ձայնի:

Արդե՛օք այժմ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի սպակիր մայրիկդ, երբ զքեզ անձայն և անշունչ կը տեսնէ խաչին վրայ, ով մահացելոց կեանք Յիսուս: Անշուշտ նա ուշագնաց լինելով խաչիդ

պատուանդանին կը գրկախառնի, և կենդանի զահ կը լինի երկնաւոր Հօրդ Աստուածոյ: Եւ միթէ հրոյ՝ կամ սրայ տանջանկըն ու կոկիծ կրնամն մօրդ կրած տանջանքներուն ու կոկիծներուն հաւասարիլ: Մանաւանդ երբ յանդուդն ձեռքի մը գեղարդավ մեռեալ մարմինդ խոցուած կը տեսնէ: Արդարեւ այս յատուկ Աստուածային հրաշք մի է, որ այսչափ աննկարագրելի ցաւեր ու վիշտեր կրող մայր մը տակաւին կենդանի կը պահես, ով անհնարից հնարաւոր Յիսուս:

Դու տակաւին խաչին վրայ եղած՝ զինուորն զքեղ կողահերձ կ'ընէ գեղարդավ, որ կողիդ վէրքէն երկու վտակներ կը բգիսես կողածին Եւայի մեռեալ հոգին լուալուդ և կենդանացնելուդ համար: Զրոյ վտակու մեղաց աղտէն կը մաքրես, արեսն վտակաւ մեռելութենէն կը կենդանացընես, ինչպէս Դանկիսանսի կոյր աշքին լցոս տուիր մի կաթիլ արիւնովդ և մաքին լցոս տուիր Աստուածագիտութեան լուովդ:

Ահա իններորդ ժամն է, Փրկիչ: ահա Յովուէփ զքեղ թագելու կը պատրաստուի, և արեւը իւր վրայի ուր քօղը կը մերկանայ և առաջին պէս աշխարհքը կը լուսուարէ, զի գու կատավ կը ծածկուիս: Յովսէփին հետ Նիկոդիմոսն ալ ընկերակից կը լինի, զքեղ խաչէդ իջուցած ատեն մեծահ ու սպառափ զիրենք կը պաշարէ, երբ Աստուածային մարմնոյդ կը դպին բեւեռներզ հանելու համար, վասն զի լցոս կը ցոլացնես ամենա-

սուշր վերքերէդ։ Սորա համար սարսափահար կը լինին, ծնկաց վրայ դալով Սուրբ Աստուած երգը կ'եղանակեն սրտաձմիկ ձայնով, մինչեւ թոյլ կուտաս զքեղ շօշափել ու խաչէն վար առնելով պատանքել ու գերեզմանին մէջ թաղել։

Ո՞հ, ո՛չափ քաղցր արտասուօք ու ըղձակաթ սիրով կը շօշափեն այդ Աստուածային հրավառ մարմինդ՝ զքեղ պատանող ծառաներդ, ո՛վ անմատչելի լոյս։ Ո՞րքան գորովափի և աղէտալի է քեղ և ամէն տեսողաց այն գդուանքն ու սիրալիր համբոյները, զորս ամենասիրելի մօրդ գըրդին մէջ կ'ընդունիս. ո՛վ սիրոյ աղքիւր Յիսուս։

Աստուածընկալ մայրդ զքեղ կտաւապատ մարմնով Աստուածունակ գերեզմանիդ մէջ կը դնէ. ամենազօ՞ր Տէր, ուր վիմով կը ծածկուիս, ու հոն կը ննջես հզօր առիւծի նման, մինչեւ Աստուածային փառօք յարութիւն առնելուդ ժամը գայ հասնի։

Ահաւոր բարձեալ Տէր. ահա մարմնովդ մեռար, բանական հոգիդ բարձեալ Հօր ծոց զրկեցիր. Ե Աստուածական հզօր զօրութեամբ ու ահագին բարկութեամբ գէպի գժոխը կը ոլանաս վայրկենական արագութեամբ, ուր անթիւ հոգիներ աղատուելու յուսով քեղ կը սպասէին հազարաւոր տարիներէ ի վեր։ Սատանան՝ որ մինչեւ հոգիդ աւանդելն անսեղեակ էր ո՛վ ըլլալուդ, կարծելով որ լոկ մարդ ես եղեր, համարձակեցաւ մարդոց ձեռոօք ամէն անարդանքն ու տանջանք

տալ քեղ. այժմ տեսաւ, ու ճանաչեց նա, որ Աստուածորդին գուն ես եղեր, ուստի սարսափահար վնելով գէպի անդունքը կը խորասուզի իւր թեւերովը։ Եւ գու Աստուածային զօրութեամբդ փախուցեալ սատանայի վրայ կը հասնիս, և զայն հրէղէն շղթաներով կը կապէս գժոխին մէջ, ուր նորա անօրէն բռնաւորութիւնը կ'իշխէր Ագամայ բոլոր սերնդոց հոգիներուն վրայ, և գերեալ հոգիներն արձակելով գժոխային կապանքներէն՝ ազատ կը թողուս։

Ո՞հա գժօխը հիմնայատակ կը քանդուի ու կը կործանուի ամենազօր Տէրութենէդ։ Փրկարար լուր կ'աւետես բանտարկեալ հոգիներուն, որ անոնց համար մարմին առիր, չարչարուեցար, մահապարտ եղար, խաչին վրայ մեռար, ու անոնց համար փրկութեան զո՞ր եղար։ Կը քարոզես՝ որ մարդկային տկար մարմնովդ սատանային հետ պատերազմեցար. ու յաղթեցիր, և այժմ Աստուածային զօրութեամբ վրէժ առիր բռնաւորէն։ Կ'աւետես նախստեղծ մարդոյն, որ նորա մահը քու մահով մեռուցիր, քու յարութեամբ զայն իւր սերնդովք անմահական կեանքը պիտի փոխագրես։ Ցոյց կուտաս գերիներուն գերող սատանայի անըլյծ կապանքները, և կ'աւետես որ այլ եւս նա իւր թեւերով կապուած է, եւ չունի իշխանութիւն մարդկան վրայ։ Դու՞՝ որ անմեղութեանդ սպիտակութեամբ ու արեանդ կարմը ութեամբ մի յաղթական դրօշ ուսիդ վրայ

ծածանելով՝ արիւնագին հոգիներուն առաջ կ'անցնիս այս յաղթական խօսքը կը հնչես ի լուր գըմոխանաց . « Ո՞ւր է յաղթութիւն քո , մա՞ն . ո՞ւր է խայթոց քո , գժո՞խք : » Նուեւ հետեւեալ այս սպառնալիքդ ալ կ'աւելցնես գժոխաժառանդ գեւերուն վրայ . « Արդ տեսջիք , արդ յամօթլիջիք . ընդունայն լիցի զօրութիւն սգւոց ձերոց , և հո՞ւր կերիցէ զձեղ : »

Ո՞ն , ո՞րչափ օրհնութեանց ու պառաբանութեանց արժանի ես այդ ըյածդ յաղթութեամբ , ո՞վ ամենայազիթ Տէր . և ո՞րչափ հաճելի ու պիրելի է քեզ գժոխքին մէջ այդ գարսաւոր բանատարկեալ հոգիներու ազատութիւնն , ո՞վ աղատարար Յիսուս : Եւ ո՞րչափ մեծ ու անպատմելի ուրախութիւն ու ցնծութիւն կը պատճառես քու արիւնագին հոգիներաւն , զօրս ազատեցիր յաւեենական գերութենէն ու մահուանէն , ո՞վ փըրկութիւն և կեանք Յիսուս :

Մինչ դու գժոխքի բանատարկեալները կ'արձակես հրեղէն կապանքներէն , Յովսէփին ու Նիկոդիմոս մարմինդ պատանակաւզ ընելով գերեզմանիդ բանախին մէջ կը դնեն : Եւ դու հոն արդելափակ կը մնաս անապական մարմինիդ . մինչեւ յարութիւն առնելուդ ժամը գայ հասնի . որպէս զի հետարգ եղազ հոգիներն իրենց հազարեալ մարմիններով յարուցանես գերեզմաններէն ի վկայութիւն Աստուածային յարութեանդ :

Ահա թաղմանդ առաջին գիշերն անցաւ . ան-

մա՞ն Տէր , և դու տակաւին գերեզմանիդ մէջ անշարժ կը կենաս , և թոյլ կուտաս կայիափային ու Անային , որ Հրէից բաղմութեամբ ու Պիղատոսի զօրքերով գան զրեզ գերեզմանին մէջ անշարժ տեսնեն , ու գերեզմանիդ կափարիչ քարը դոցեն ու կնքեն , որպէս զի մարմինդ մարդոց ձեռօք գողցուին անկարելի լինի : Ահա Արարչական անունդ կրող մատանիով կնքուած գերեզմանդ պահապան զինուորներով կը պահպանուի անքուն հակողութեամբ , որպէս զի աշակերտներէդ գողցուելուզ սուտ համբաւը տեղի չունենայ վրադ : Հրէից ըրած այս զգուշալթիւնները կ'ընդունիս ո՞վ իմաստութիւն չօր Յիսուս , որպէս զի անուրամանիլի լինի ճշմարիտ յարութիւնդ սոյն հաւասարի նշաններով :

#### Ա. Գ. Օ Թ. Ք

Ո՞վ լուսատու հոգւոց Յիսուս . սուրբ աւազանի լուսով լուսաւորուած հոգիս՝ որ մեղաց տրդմով սեւցուցած եմ , լուսաւորէ՝ կենարար մահուանդ չնորհիւ , ինչպէս խաւարած արեգակը լուսաւորեցիր : Մեզքով կուրցած մորիս աշաց՝ լուսաւորութիւն տուր սուրբ արեանդ չնորհիւ , ինչպէս Ղունկիանոսին լոյս սուէիր : Սուրբ պատանքիդ մաքրութեան նման մաքրութիւն տուր անմաքրուր խղճիս , ո՞վ սրբութիւն հոգւոց Յիսուս :

Անապական սուրբ թաղմանդ չնորհիւ՝ սուրբ պատհէ զօդու ապականացու մարմնոյս արգելարանին մէջ . ո՛վ կեանք հոգւոց Յիսուս։ Մեղաց գերութեան մէջ բանտարկուած հոգիս ազատէ , եւ դէպի յափառենական փրկութիւնն առաջնորդէ , ո՛վ առաջնորդ կենաց Յիսուս։ Ահա ողորմութեանդ կապաւինիմ , փրկուելուս յուսով մահուանս աւուր կը սպասեմ . ազատարա՞ր Տէր , ազատէ զհոգիս մեղաց արկուծներէն . որպէս զի փրկութեան արժանի գործքերով մնացեալ օրերս անցունեմ , ու փրկութեանս վիճակին մէջ հոգիս քեզ աւանդեմ . ամէն :

ԹՈՒՀՐԴԱԾՊԻԹԻՒՆ ՄԵՏԱՎԱՆՔՈՐԴ

Յիսուսի կենսաքեր Յարութիւն

Ամենազօ՞ր Տէր , ահա չարչարանացդ ու մահուանդ տիրալի ձմեռն անցաւ . այժմ Աստուածային յարութեանդ անվերջանալի ուրախութեան գարունը պիտի սկսի : Ո՛վ անմահ հզօր առիւծդ , բաւ չեղա՞ւ գերեզմանիդ մէջ անշարժ կենալուդ ժամերը : Բաւ չեղա՞ւ բեւեաներուդ սաստկակը կից ցաւերը , զորս մինչեւ ցարդ սիրելի մայրդիւր սրտին մէջ կը կրէ անմոռաց յիշատակութեամբ գքեզ խաչին վրայ երեւակայելով , ու անգուն աչօք արտասուելով քու Աստուածային տեղուն աչօք արտասուելով քու Աստուածային տեղուն առաջ կարօտի :

Ահա կիրակամոի կէսդիշերուան ժամն է Փըրկիչ , ահա յաղթութեանդ աւարներով գէպի վեր կը բարձրանաս գժոխըի անդունդէն . չետք առած հոգիներէն ոմանք եղեմական դրախտը կը զրկես խաչակիցդ աւազակին հետ , և ոմանք ալ իրենց հողացեալ գերեզմանները կը զրկես , և անժերի մարմիններով կը կենդանացնես , ի տես երուասաղէմաբնակ ժողովրդոց և ի նշան ճշմարիտ յարութեանդ :

Ահա յարութիւն առնելուդ վայրկեանն . ահա եսայի մարդարէին գուշակած խօսքն յիշելով « Արդ յարեաց .. արդ փառաւորեցայց , արդ բարձրացայց » գերեզմանդ անապական մարմնով յարութիւն կ'առնուս : Հոն կը թողուս մեռելութեան կտան ու վարշամակը . հոն անշարժ կը թողուս գերեզմանիդ գոցուած ու կնքուած գուռը իւր ամրող կնքավը , և գերեզմանապահ զօրականաց բաց աշքերէն անտես կը մնաս : Կուսածին մարմնովդ կոյս գերեզմանէդ ելնելով կոյս մօրդ նախ կը ներկայանաս Աստուածական փառօք : Որավշեաւ անպատմելի եղան ամենասիրելի մօրդ սրտի ցաւերն ու վիշտերը , սորա համար անպատմելի ուրախութեամբ զայն կը միսիթաբես : Մայր մը՝ որ մահէդ վերջ քու ցաւերուդ կը կնապատիկ կսկիծն ունեցաւ իւր սրտին ու հոգւոյն մէջ . այժմ Աստուածային փառօքդ կը հրձուի և կը փառաւորուի :

Ո՞հ , սրբան ըղձակաթ սիրով կը գրկախառ-

Նիք ու կը համբուրեք իրարու հետ, ո՞վ Աստուածադորդի Յիսուս, և Աստուածամայր Մարիամ: Ո՞հ, ի՞նչ աննկարագրելի սիրով ու ցնծութեամբ կը զմայլեցնես այն Աստուածաբնակ գիրկը, որոյ մայրենի գգուանաց մէջ սնած ես ի մանկութենէ. ո՞վ Արարածոց ցնծութիւն Յիսուս: Ո՞հ, ի՞նչքան սիրելի և ախորժելի են քեզ այն մայրական սիրոյ համբոյրները՝ զսրս որդիական գորովով ու Աստուածական սիրով կ'ընդունիռ այն մօր Աստուածաշօշափ շրթունքներէն, ո՞վ սիրոյ կերակուր քաղցեալ հոգւոց Յիսուս:

Ահա սիրելի մայրդ Աստուածային սիրոյդ մէջ զմայլած կը թողուս, և միւս սիրելի աղախիններդ միսիթարելու կ'երթաս, գթառա՛տ Տէր: Ահա լուսափայլ հրեշտակդ գերեզմանապահ զօրականաց կ'երեւի, և նոցա աչաց ներկայութեամբ գերեզմանիդ կափարիչ քարը մէկ կողմը դնելով հօն կը նստի, որովհետեւ սիրելի աղախինդ Մադդաղենացին գէպ ի գերեզմանդ կուդայ մարմինը անուշ իւզով օծելու համար չգիտելով որ գերեզմանդ զինուորներով շրջապատուած է. չգիտալով որ դու յարութիւն առած ես: Մադդաղինացին՝ որ առաջինն էր ջերմեռանդ աղախիններուդ մէջ, առաջին կը լինի գերեզմանդ տեսնալունէն: Նա՝ որ մարմինդ տեսնելու և օծելու յուսով բոլոր գիշերն անքուն անցուցած է միւս աղախիններուդ հետ, այժմ լուսատեսիլ հրեշտակէն յարութեանդ մկրտեն, և երկնաւոր Հօրդ որդե-

զքեզ տեսնելու և հետդ խօսելու կ'արժանանայ: Նոյնպէս միւս աղախիններով կը միսիթարես նախ երկու հրեշտակիններով, և ապա Աստուածային տեսութեամբդ, և նոցա բերած անուշահոտ խունկերուն ու իւզերուն փոխարէն՝ զքեզ հնքդ կ'երեւցնես. և երկրպագելի սոքերդ համբուրել կուտաս նոցա, այն սոքերդ՝ որ իրենց սիրոյ համար կրած բեւեռներուդ վէրքերով կը աեսնուին: Այսպէս սիրելի աղախիններով կը զմայլեցնես Աստուածային սիրովդ, ու խաղաղական ուղղունիւդ: Նոցա ահարեկեալ սրտերը կը հանդարտեցնես, և պատուէր կուտաս, որ երթան սիրելի աշակերտներուգ աւետեն Աստուածային յարութիւնդ, ու Գալիլեա լեռն երթան հոն զքեզ տեսնելու:

Ահա Քալիլեա լեռ գումարուած առաքեալներուգ կ'երեւիս Փրկիչ, ահա նոցա սիրոյ երկրպագութիւններ սիրով կ'ընդունիս, սիրովդ զանոնք կը զմայլեցնես: Կ'աւետես նոցա, որ երկնի ու երկրի իշխանութիւնն ու արարչական թագաւորութիւնը քուկդ է: Տիրական պատուէր կուտաս նոցա, որ երթան քարոզեն ամէն աղդաց, որ նոցա համար մարդ եղար, չարչարուեցար, խաչին փրայ մեռար, ու գերեզմանէն յարութիւն աւիր զանոնք յաւիտենական մահուանէն փրկելուգ, ու անմահական կենաց արժանացնելուգ համար: Պատուէր կուտաս՝ որ ամէն հաւատացեալներդ յանուն Ամենասուրբ երորդաթեանդ մկրտեն, և երկնաւոր Հօրդ որդե-

գիրներ, և քեզ ժառանգակիցներ ընեն, նաեւ սուրբ Հոգւոյն շնորհաց ընդունակ. Քաջալերութիւնդ կուտաս առաքեալներուդ, որ դու միշտ նոցա հետն ես, և ամէն եկած վտանգներէ զանոնք պիտի աղատես: Նաեւ ամէն հաւատացեալներէդ անբաժանելի պիտի մնաս մինչեւ աշխարհիս վերջ:

Յարութիւն առածդ օր Կղէովալսասին և իւր ընկերացն ընկերակից կը լինիս, անձանօթ կերպով կերացն ընկերակից կը լինիս, անձանօթ կերպով կը յանդիմանես. Նոցա թերահաւատութիւնը կը յանդիմանես. Մովսէսի և մարդարէից գուշակած պատգամներով ծշմարիտ Մեսիսա լինիլդ կը հասաւատես, ծանօթութութիւն կուտաս նոցա, և վայրկենաբար աներեթութէ կը լինիս: Փակուած վերնայարկին մէջ ժողուած աշակերտացդ կերեւիս, Աստուածային ողջունիւդ նոցա յուզեալ ու վրդովեալ սրտերը կը ջունիւդ նոցա յուզեալ ու վրդովեալ սրտերը կը խաղաղացնես. Երկրպագելի ձեռքերուդ ու ոտիսաղացնես. Վերքագելը նոցա շօշափել ու համբուրել քերուդ վերքերը նոցա շօշափել ու համբուրել կուտաս, որպէս զի այդ նշաններով իրենք հաւատաս, որ այլոց հաւատացնեն, որ դու ծշմարիտ Աստուած լինելով ծշմարիտ մարդ եղար, մարդոց համար մեռար ու յարութիւն առիր. Փակուած դռներով ու լուսամռւտներով նոցա երեւցար, որ դռներով ու լուսամռւտներով նոցա երեւցար, որ կը այս կերպ քարոզեն կոյս մօրէդ ծնուիլդ, ու կը հայտած գերեզմանէն յարութիւն առելլդ:

Յարուցեալ Տէր, ահա սիրելի աշակերտաներդ ու աշակերտուհիներդ զքեզ տեսնելով ու հետզ խոսելով՝ հաւատացն, որ դու ծշմարիտ մեռ-

եալ ու յարուցեալ Յիսուսն ես: Բայց Հրէից ալ յարութեանդ հաւատափ նշաններ թողուցա՞ծ ես, որ անուրանալի վիստեր մինին նոցա առաջ:

Այսո՛, ամենիմա՛ստ Տէր, ունիս այն հաւատափ նշանները, որոնք անսուելի հաստատութիւններ են ճշմարիտ յարութեանդ: Արպէս զի ան նշաններովն առիթ տաս մարդերը հաւատքի բերելու, և անզեղները գէպի փրկութեան ճանապարհը գարձնելու. Եթէ նոքա կամաւ ու գիտութեամբ կը մերժեն ճշմարտութիւնը. և յամառ կը մնան իրենց անզպջութեան մէջ, սորա համար Աստուածային աեսութենէդ ալ զուրկ կը մնան:

Միթէ Հրէայք չիմացա՞ն ճշմարիտ յարութիւնը, Փրկիչ: Միթէ գերեզմանապահ զօրքերը չէին, որ կայիտափայի և Աննայի ներկայութեան պատմեցին, որ բաց աչօք տեսան երկնքէն իջած լուսեղէն հրեշտակը, որոյ ահաւորութենէն իրենց գունաթափ ըլլանին կը խոստավանին, որ գերեզմանին բոլորափ կիսամեռ ինկած էին: Միթէ յայտնապէս չխոստավանեցա՞ն, որ դու ծշմարիտ յարութիւն առած ես, և զմռսուած պատահքդ գերեզմանին մէջ թողուցած ես, նոյնպէս վարշամակդ, որոնք զատ զատ ծալուած կը կենան տակաւին իրենց տեղը: Միթէ չվկայեցի՞ն որ դու յարութիւն առնելուդ տատեն գերեզմանիդ ամբողջ կնիքներն առանց բեկուելու թողուցած ես և տակաւին նոյն ամբողջութեամբ իրենց տեսերը կը կենան: Եւ այսչափ հաւատափ լուրերը

Հաղորդելէ վերջ՝ միթէ չը ստիպեցի՞ն զանհաւան  
քահանայապեսները, որ լսածներն աչօք ալ աես-  
նեն, ու հաւատան այն նշաններուն, որոց ուրաց-  
ուիլն անկարելի է:

Կայիշափան ու Աննան իրենց կամակիցներովն  
այս վկայութիւնները լսելէ վերջ կամաւ և գե-  
տութեամբ ուղղութիւնը կը թիւրեն, ճշմարտու-  
թիւնը կը ստեն, անուրանալի յարութիւնդ կ'ու-  
րանան, զինուորները կը կաշառեն, Պիղատուը  
խրեանց կողմը կը դարձնեն, սուտ վկաներով  
սուտ համբաւ կը հրատարակեն ստապատիր Հրէից  
մէջ, թէ Ախուն Նաղովրեցին յարութիւն առած  
չէ, այլ աշակերտներէն գողցուած է:

Բարձեա՛լ Տէր, այօչափ երկայնմուռթեանդ  
դէմ հակառակող ու ճշմարտութիւնը սասող ան-  
ձերուն այլ եւս ի՞նչ կը մնայ ընել, ո՞չ այլ ի՞նչ,  
բայց արդար պատիժ ու վրէժինդրութիւն:

Կայիշափան իւր համախոհ անձանց հետ լաւ  
իմացան ամէն սատուգութիւնները, բայց աւելի  
լաւն՝ իրենց անձնահաճութիւնն ու անձնաշահու-  
թիւնն ընարեցին, որովհետեւ դու ինքդ վճռած  
ես Փրկի՛չ, որ ճշմարտութեան հետեւանքն ու  
արդիւնքը անձնաշահութեան մէջը չէ, այլ անձ-  
նազոհութեան մէջն է. Հրէից քահանայապետքն  
ու փարիսեցիք անոր համար փրկութեանդ չար-  
ժանացան, որովհետեւ անձնահաճ ու անձնաշահ  
մարդիկ էին: Եւ անոր համար առեցին դքեզ, ո-  
րովհետեւ դու անձնուրացութիւն քարոզեցիր

մարդոց, և անձնազոհութեան օրէնքով սահմա-  
նեցիր մարդոց փրկութեան հասնիլը:

### Ա. Դ. Օ Թ. Ք

Ո՛վ յարուցեալ Աստուած իմ Յիսուս. կենդա-  
նարար յարութեանդ յոյսը միշտ կենդանի պա-  
հէ սրտիս մէջ, որպէս զի կենդանի յուսով կա-  
րողանամ ապրիլ այս վհատելի կեանքիս մէջ:  
Ոիրելի աղախիններուդ քեզ նուիրած անուշահոս  
իւզերու և խունկերու փոխարէն՝ սրտիս սէրը  
քեզ կը նուիրեմ, և աչացս արտասուքն ու Մը-  
թանցս օրէնութիւն զքեզ կը մատուցանեմ, ըն-  
դունէ՛, ո՛վ լսող աղօթից ամենագթած Տէր:  
Սուրբ առաքեալներուդ ճշմարիտ հաւատքին վը-  
րայ հաստատուն պահէ զիս, զօրացուցի՛չ Տէր:  
որպէս զի սատանայի տուած մեղաց կաշառով  
հրապուրուած շինիմ, և զքեզ չհեռացնեմ սրտիս  
օթեվանէն: Ահա Մագդաղենացւոյ նման զքեզ  
կ'աղաչեմ, Փրկի՛չ, որովհետեւ սրտիս գերեզմա-  
նէն բացակայ կը տեսնեմ զքեզ անհանդիստ հոգ-  
ւոյս աչօք, և ահա ստէպ կ'աղաչեմ, տուր ինձ  
քո սիրազէղ ձայնդ, և խաղաղա՛ցո սիրտս ու հո-  
գիս մեղաց խուսվութենէն, ինչպէս խաղաղացւ-  
ցիր սիրելի աղախիններդ ու առաքեալներդ:  
Սուրբ առաքեալներուդ բարեխօսութեամբ չնոր-  
հացդ մէջ պահէ զիս միշտ, որ խելագարի նման

Հիետեւիմ մեղաց ախտին . այլ յարատեւ յաջո-  
ղութեամբ միայն քեզ հետեւելով , ու սուրբ պա-  
տուիրանքներդ պահելով հոգիս ապրեցնեմ մե-  
ղաց որոգայթներէն : Սովատանջ սիրտս ու հո-  
գիս Աստուածային սիրովդ կերակրէ , ո՞վ սիրոյ  
և կենաց հաց Յիսուս , որպէս զի միշտ զօրաւոր  
ու յաղթող գտնուիմ հոգւոյս համար որոգայթ-  
ներ շինող աներեւոյթ թշնամնոյս առաջ , և փըր-  
կութեան յուսով ապրիմ ու մեռնիմ , ու անվախ-  
ճան կենաց հասնիմ . ամէն :

ՎԵՐՋ

## ՑԱՆԿ

Գլուխ

Գլուխ	Երես
» Յառաջաբանութիւն .....	Ե
Ա . Խորհրդածութիւն . Յիսուսի ի վերնատունն	7
» Աղօթք Ա . խորհրդածութեան .....	14
Բ . Խորհրդածութիւն Յա . ի սիրոյ վերջին կտակ	16
» Աղօթք Բ . խորհրդածութեան .....	20
Գ . Խորհրդածութիւն Յա . աղօթէ ի պարտէզին	22
» Աղօթք Գ . խորհրդածութեան .....	28
Դ . Խորհ . Յա . ի մատնութիւն և ըմբռնումն	30
» Աղօթք Դ . խորհրդածութեան .....	34
Ե . Խորհ . բանտարկութիւն Յիսուսի ևն .	35
» Աղօթք Ե . խորհրդածութեան .....	41
Զ . Խորհ . Յիսուս յատեանս Պիղատոսի ևն .	42
» Աղօթք Զ . խորհրդածութեան .....	47
Է . Խորհրդածութիւն Յիսուս փշովք պսակի	48
» Աղօթք Է . խորհրդածութեան .....	51
Ը . Խորհ . Յա . ի խաչելութեան և մահ . ՎՃԻՈՆ	53
» Աղօթք Ը . խորհրդածութեան .....	58
Թ . Խորհրդածութիւն Յիսուսի խաչելութիւն .	60
» Աղօթք Թ . խորհրդածութեան .....	66
Ժ . Խորհրդածութիւն Յիսուսի մահն և թաղումն	67
» Աղօթք Ժ . խորհրդածութեան .....	73
ԺԱ . Խորհ . Յիսուսի կենսաբեր յարութիւն ..	74
» Աղօթք ԺԱ . խորհրդածութեան .....	81





معارف نظارت جلیله سنك ۳۹۴ نومرولي رخصتيله  
طبع اولنمشدر

1772



